Վարդանանք

№8,9 2010 (1)

Շատ կարևոր է՝ ինչպես ենք ապրում,
Բայց առավել կարևոր է՝ ինչի համար...

Ես գնահատում եմ ազատությունն ու վաճառում եմ ճշմարտություն:

էջ 4

Արդեն 17 տարի Վ. Հովհաննիսյանի մտերիմներն ու «Վարդանանք» ակումբը Եռաբլուրում իրենց հարգանքի տուրքն են մատուցում հայրենանվեր հերոսին:

էջ 8

Ես պարտավոր եմ շարունակելու Վարդանի գործը:

էջ16

1992-ից Ամանորի գիշերը Եռաբլուրում ազատամարտիկների շիրիմների մոտ վառվում են մոմեր, և նրանց հարազատները Նոր տարին դիմավորում են տղաների հետ: Դա երախտագիտության ու նվիրումի բարոյական հատուցում է: Օրինակ՝ լինի տղաների լուսավոր հիշատակը, որը մեզ այսօր օգնում և սովորեցնում է ճիշտ ապրել:

Հունվարը սիրելի է ոչ միայն Ամանորի և Ս. Ծննդյան տոներով, այլև Ազգային բանակի հիմնադրման օրով, երբ մենք, ըստ ավանդույթի, շնորհավորում ենք բոլոր զինծառայողներին և ուժեղ սեռի ներկայացուցիչներին, քանի որ կա մեծ ցանկություն ամեն մի հայ տղամարդու մեջ տեսնել հայրենիքի հուսալի պաշտպանի, որի համար հայրենիքի հանդեպ պարտքը և արժանապատվությունը լոկ խոսքեր չեն: Այդ հանդիսավոր օրը բոլորիս ուրախությանը խառնվում է նաև մի պայծառ թախիծ տղաների համար, ովքեր իրենց անմահությամբ դրեցին Ազգային բանակի հիմքը՝ մեզ պարգևելով հաղթանակի հպարտություն և ափսոսանքի կսկիծ:

Սիրելի՛ ընթերցող, «Վարդանանք» ակումբի գործունեության ու այս թերթի առկայությունն ունի մի գլխավոր նպատակ՝ ճանաչել և հիշել, հիշել անուն առ անուն, այլապես կյանքը կկորցնի իր իմաստը: Մեր թերթի այս համարի գլխավոր և կարևոր նշանաբանը շարունակում է մնալ նույնը. ծառայել քո գործին հավատով ու նվիրումով, այնպես, ինչպես մեզ հրամայում են անմահները… *Սաքենիկ Աբրահամյան*

ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի նախագահ

Եռաբլուրում մենք հարգանքի տուրք ենք մատուցում նրանց հիշատակին, ովքեր իրենց կյանքով վավերացրին սեպտեմբերի 2-ին Արցախում և դրանից երեք շաբաթ անց Հայաստանում ընդունված անկախության հռչակագրերը, իրենց արյան գնով կյանքի կոչեցին հայության համաժողովրդական կամքի այդ դրսևորումները: Դժվարին այդ ճանապարհին անցնողներից շատերը ԵՊՀ դասախոսներ, ուսանողներ կամ շրջանավարտներ էին, ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանից, Լեոնիդ Ազգալդյանից, Վարդան Ստեփանյանից, Վարդան Բախշյանից մինչև շատերի համար անհայտ անուններ, ովքեր, սակայն, պակաս դեր չխաղացին վերջնական հաղթանակի կերտման հարցում: … Մեր խնդիրն այսօր ոչ թե թշնամու գրոհներին դիմակայելն ու ավելորդ կրակակետերը լռեցնելն է, այլ մարտական տեխնիկայի արդիական միջոցներին տիրապետելը, ռազմաարդյունաբերական համալիրը զարգացնելն ու մեր բանակը 21-րդ դարի բանակին ներկայացվող բավական խիստ չափանիշներին համապատասխանեցնելը: Եվ այս ասպարեզում ավելի քան մեծ ու կարևոր է համալսարանականների դերակատարությունը: Մեր բանակը ձեր կարիքն ունի, մեր բանակը սպասում է ձեզ: Եռաբլուրում հանգչողները մեկընդմիշտ լուծեցին թշնամու սրի տակով անցնել-չանցնելու երկընտրանքը, և Եռաբլուր զինվորական պանթեոնի միակ ճանապարհին անցնում է հաղթակամարի տակով: Դրա ճարտարապետները եղան մեր ավագ ընկերները: Ես՝ որպես ՀՀ պաշտպանության նախարար, որպես ՀՀ քաղաքացի, ցանկանում եմ ու վստահ եմ, որ ԵՊՀ և մեր ողջ ուսանողության այսօրվա ու վաղվա սերունդները մեր հայրենիքի համար իրենց անցնելիք ճանապարհին մի-մի փոքրիկ հաղթակամարներ կկանգնեցնեն՝ ամբողջացնելով ուժեղ, ազատ և բարեկեցիկ Հայաստանի կառույցը:

Սեյրան Օհանյան

ՀՀ պաշտպանություն նախարար

ԵՊՀ «Վարդանանք» ՌՀԴ ակումբի ղեկավար
Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Աբրահամյան

Ի սրտէ շնորհաւորում եմ Ձեզ ու Ձեր ընտանիքին
Ամանորի եւ Սուրբ Ծննդի կապակցությամբ:
[illegible] մաղթում եմ նվիրական բոլոր երազանքների իրականացում, նորանոր
հաղթանակներ կյանքում եւ աշխատանքային գործունեության մեջ:
Թող 2010-ը լինի առողջության, հաջողության ու համախմբվածության նշանակալի
ձեռքբերումների տարի:

Հարգանքներով՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար

Ս. Օհանյան Սեյրան ՕՀԱՆՅԱՆ

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՀԻՇԵՆՔ, ՈՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԱՆՄԱՀ ՄՆԱՆ

Խոնարհվելով բոլոր զոհված ազատամարտիկների սուրբ հիշատակի առջև՝ «Վարդանանքն» իր յուրաքանչյուր համարում ներկայացնում է զոհված ուսանող-ազատամարտիկների ծննդյան և հիշատակի օրերը:

Ազգալդյան Լեոնիդ Ռուբենի – ֆիզ. ֆակ., Ազատագրության բանակի հրամանատար, 22.11.1942 – 21.06.1992թթ.

Ավանեսյան Արա Համբարձումի– իրավ. ֆակ. – 26.12.1968 – 27.01.1992թթ.

Բախշյան Վարդան Ազատի – պատմ. ֆակ. – 01.06.1965 – 16.12.1991թթ.

Գեորգյան Ֆուրման Արկադիի – տնտ. ֆակ. – 28.08.1972 – 29.09.1992թթ.

Գևորգյան Սամվել Վահրամի - բան. ֆակ. – 25.10.1957 – 28.03.1994թթ.

Խոջոյան Սարգիս Վրեժի /Բասմաչ/ - իրավ. ֆակ. – 15.12.1975 – 03.05.1992թթ.

Հովհաննիսյան Վարդան Նասլետի – տնտ. ֆակ. – 13.01.1972 – 11.09.1992թթ.

Զուլհաջյան Միեր Արամի – երկր. ֆակ. – 28.11.1967 – 26.08.1993թթ.

Սարգսյան Տիգրան Սարգիսի – իրավ. ֆակ. – 27.04.1965 – 09.12.1992թթ.

Վահանյան Վարդան Վիտալիի – պատմ. ֆակ. – 02.11.1971 – 27.03.1993թթ.

Մարդ կռվի դաշտում իրեն տղամարդ է զգում, գիտի, թե ինչի համար է ապրում ու կռվում: Երբ գիտակցաբար ես գնում հայրենիքը պաշտպանելու, արդեն վախ չկա:

Սամվել Գևորգյան

Գիտե՞ս, մա՛մ, միևնույն է, գնալու եմ, բայց ուզում եմ քո օրհնությամբ գնալ, չեմ ուզում, որ երկու-երեք օրից գրություն ստանաս, թե մամ ջան, ես գնացի Հայրենիք, որ դարանակալեմ մեր տան դիմացի սարի լանջին ու գնդակահարեմ մեր բակը մտնողին, հետո իջնեմ ու դարպասին գրեմ. «Այս տունը պատկանում է Ֆուրման Շահումյանցուն, օտարին սպասվում է բակում փռված լեշի ճակատագիրը»: Պիտի գնամ, մա՛մ, գրապահարանիս մեջ, իմ նկարի աջ ու ձախ կողմերում Անդրանիկի ու Գևորգ Չավուշի նկարներն են. չեմ կարող թողնել գերության մեջ: Պիտի գնամ, ես Արտակին պիտի փոխարինեմ: Արտակի (դասընկերն էր, զոհվեց 1992-ի մայիսի 2-ին էրքեջի մոտ) զոհվելուց հետո համալսարանի միջանցքները ինձ խեղդում են: Պիտի գնամ, չեմ կարող տեսնել, թե դու, իմ թագուհի՛ մայր, ինչպես ես ուրիշի հնամաշ շորերը հագնում:

Ֆուրման Գեորգյան

Տղամարդը պետք է ապրի տղամարդավարի ու տղամարդու պես էլ մեռնի: Եթե ամեն մի հայ տղամարդ մտածի միայն փողոցում սեղան դնելու ու փող աշխատելու մասին, բա էս հողը, էս ժողովրդին ո՞վ պետք է պաշտպանի:

Տիգրան Սարգսյան

Պատահական չէ, որ «Պատմությունը կեղծողներին պետք է գլխատել այնպես, ինչպես կեղծ դրամ կտրողներին» ասացվածքը այսօր առավել քան երբևէ դառնում է հրատապ: Առանց պատմության ժողովուրդը նմանվում է որկրամոլների, սեռամոլների մի պարզագույն ամբոխի: Իսկ եթե պատմությունը մատուցում ես կեղծ, թխված, այս դեպքում ժողովրդի վիճակը դառնում է կատարյալ գորդյան հանգույց, անկումային և հուսահատական: Բավ է՝ մեր իսկ սխալը բարդենք այս կամ այն ազգի վրա: Մի պահ գոնե ճշմարտության լույսով հետ նայենք, փորձենք ուղիղ և համարձակ նայել ժամանակի ամենախիստ աչքերին…

Ինչու՞ մենք այսօր կանգնում ենք փակուղիների առջև: Որովհետև մենք ամենավատ դաս սովորողներն ենք, չենք խրատվում նույնիսկ կերած ծեծից ու ստորությունից:

Վարդան Բախշյան

«Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի գործունեությանը ծանոթ եմ վաղուց, իսկ «Վարդանանք» պարբերականի երեք հրատարակություններն ահա իմ գրասեղանին են: Դրանք իրենց տեսակի մեջ ինքնատիպ են ու յուրօրինակ, արտաքնապես՝ համեստ, բովանդակությամբ՝ հույժ գովելի:

Հայոց դյուցազնական ոգու և նվիրյալ զավակաց սխրանքի փառաբանումը գտա «Վարդանանք» - ի էջերում և համոզված եմ, որ գտնելու եմ մշտապես: Նաև այսպես են սերունդ կրթում, տեսակ դաստիարակում, զինվոր մեծացնում ու հայրենիք պահում:

Կցանկանայի, որ «Վարդանանք» - ի գալիք հրատարակությունները նաև արտաքնապես շքեղ լինեին, գունազարդ և արդիական, խոսուն լուսանկարներով հագեցած: Համոզված եմ՝ մեր կողքին է ապրում այն հայորդին, ով կցանկանա իր նյութական աջակցությունը բերել այս գործին՝ ոգեղեն տաճարի կառուցմանը մասնակից լինելով: Այսօր ու վաղը հազարավոր պատանիներ և երիտասարդներ պիտի դառնան այս տաճարի ուխտավորը՝ որպես ճշմարիտ ու զտարյուն վարդանանք:

Նաղաշ Մարտիրոսյան

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան

Ես ճշմարտություն եմ վաճառում

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Նաղաշ Մարտիրոսյանի վերոնշյալ խոսքերը զարմանալի ու շատ ցանկալի արագությամբ իրականություն դարձան մեզ համար, երբ «Անտարես» հոլդինգի տնօրեն Արմեն Մարտիրոսյանը, որպես նախկին համալսարանական և որպես ճշմարիտ հայորդի, որոշեց անշահախնդիր կերպով աջակցել մեզ «Վարդանանքի»՝ ԵՊՀ 90-ամյակին նվիրված համարի հրատարակության հարցում՝ իրականություն դարձնելով գունավոր ու խոսուն պարբերական ունենալու մեր երազանքը: Որպես շնորհակալական խոսք՝ մենք որոշեցինք զրուցել պարոն Մարտիրոսյանի հետ «Մեր բարեկամները» խորագրով էջի շրջանակներում՝ ընթերցողին ավելի մոտիկից ծանոթացնելով այն մարդուն, ըստ որի՝ հաջողությունը երբեք պատահական չի լինում:

-Դուք Ձեր ուսանողական կյանքը սկսել եք մեր երկրի համար բախտորոշ նշանակություն ունեցող ժամանակահատվածում՝ 1988-ին: Դա ինչ-որ նշանակություն ունեցա՞վ Ձեր հետագա կյանքում և ուսանողի Ձեր տեսակի ձևավորման վրա:

-1988-ի սեպտեմբերի մեկին, երբ դարձա ԵՊՀ-ի Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող, Շարժումն արդեն թափ էր առել: Ես և իմ ընկերները, ի տարբերություն մյուս ուսանողների, ովքեր ցերեկները նստացույց էին անում, հաճախում էինք դասերի, և մեր նստացույցը սկսվում էր դասերից հետո: Մենք կողմ էինք նրան, որ պետք է ուսումից չկտրվել: Մտածում էինք, որ պիտի անգամ գիշերն արդյունավետ օգտագործել, իսկ դրա լավագույն ձևը աշխատանքն էր. ես սեպտեմբերի մեկին դարձա Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքի պահակը, այսինքն՝ իմ համալսարան ընդունվելը միանգամից զուգահեռվել է աշխատանքով և Շարժման մեջ լինելով:

«Անտարեսն» էլ հենց համալսարանից է սկսվել: Դա երևի առաջին մասնավոր ձեռնարկությունն էր ԵՊՀ-ում, որի բոլոր աշխատակիցները համալսարանականներ էին: Այդ տարիներն իմ և իմ երեք գործընկերների համար ինֆորմացիա կլանելու առումով ամենաերջանիկ տարիներն էին: Երկրորդ կուրսում, ի շնորհիվ, ի պատիվ մի հրաշք, մի հանճար մարդու՝ Ռաֆիկ Տոնոյանի, ով մեր ֆակուլտետի դեկանն էր, ստեղծվեց մի նոր ամբիոն: Եվ մենք դարձանք առաջին ու վերջին ուսանողներն այդ մասնագիտացման, որ կոչվում էր «Հաշվողական տեխնիկայի կիրառումը հայագիտության մեջ»: Մեր դասերն անցնում էին և՛ համալսարանում, և՛ Մատենադարանում: Այդ ոլորտում մենք պիտի դառնայինք առաջին մասնագետները հայագիտության մեջ: Իմ այսօրվա գործի հիմքերը ես փաստորեն ստացել եմ համալսարանում: Ուզում եմ անպայման հիշել իմ գիտական ղեկավարին՝ Ստեփան Մարկոսյանին, ով կարողացավ փոխանցել ինձ սերը գիտության նկատմամբ և վերջնական ձևավորել որպես տղամարդու: 1992-ին մեր դասախոսների հանձնարարությամբ սկսեցինք աշխատել «Մաթեմատիկայի խնդիրների շտեմարանի» վրա՝ հրատարակելու համար: Եվ դա շատ ծանր ու պատասխանատու աշխատանք էր: Այդ ընթացքում ֆիլմադարանը պատվիրեց առաջին գրքերը, դրանք էին՝ «Ազնավուրը կինոյում»՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնք դարձան մեր առաջին գրքերը Շտեմարանից հետո: Այնուհետև մենք չորսով ստեղծեցինք հրատարակչություն, ստեղծեցինք համակարգիչներ հավաքելու և վաճառելու, ծրագրավորման, առևտրով զբաղվող ձեռնարկություններ: Համալսարանում մենք անգամ մեր սենյակն ունեինք, որովհետև ոչ միայն լավ էինք կատարում մեր գործը, այլև համալսարանի հետ աշխատում էինք փոխշահավետ պայմաններով: Իսկ մեր չորս ընկերների համագործակցությունը, ցավոք, տևեց մինչև 1996-ը, որից հետո ես միայնակ շարունակեցի:

-Ինչո՞վ են տարբերվում Ձեր և ներկայիս սերնդի ուսանողական որակները:

-Ես բախտ ունեմ շփվելու այսօրվա սերնդի ուսանողության հետ, դասավանդել ու դասավանդում եմ երեք տարբեր բուհերում: Հիմա կենտրոնացել եմ արդեն Սլավոնական համալսարանում: Ուսանողների մակարդակը շատ տարբեր է, բայց այսօրվա ուսանողն ունի ամենակարևորը. իրենց մեջ սպանված է ստրուկը, իրենք ազատ մարդիկ են և չեն կրում սովետի բեռը, որը շատ կարևոր է:

-«Անտարեսի» այժմյան գործունեության ի՞նչ ոլորտներ կառանձնացնեք:

-«Անտարեսը» տարբեր ձեռնարկությունների հոլդինգ է, ո-

ը հիմնականում զբաղվում է մեդիա ոլորտի գործունեությամբ: Մեր թիրախը մեր սպառողն է:

Ամենահետաքրքիր ու վեհ մասնագիտություններից մեկը գրքի ստեղծումն է, և մենք այսօր շատ լուրջ ներդրում ունենք դպրոցական ու բուհական դասագրքերի ստեղծման գործում, էլ չեմ խոսում գեղարվեստական ու մասնագիտական գրականության մասին: Հրատարակում ենք նաև տարբեր բառարաններ, կատարում ենք թարգմանություններ տարբեր լեզուներից, թարգմանում ենք հայերենից այլ լեզուների: Աշխատում ենք Ուզբեկստանի, Ղրղզստանի, Ղազախստանի, Ուկրաինայի, Ռուսաստանի հրատարակիչների հետ: Սա շատ համառոտ հրատարակչական գործի մասին: Անցնենք գովազդին: Ամենահետաքրքիր գործերից մեկն է, երբ բիզնեսը ճանաչում ես հատման եզրով: Եվ այստեղ կարևորն այն չէ՝ ինչ է ձեռնարկությունն ասում ինքն իր մասին, կամ հեռուստատեսությունն ինչ է ասում այդ ձեռնարկության մասին, այլ այն, թե ինչպես է սպառողն այդ ամենն ընկալում: Իսկ սա հայ գործարարին դժվար է բացատրել: Մենք այս բնագավառում աշխատում ենք միայն բարձր մասնագիտական ցենզ ունեցող կադրերի հետ: Եվ 2003-ից այս կողմ ՀՀ հեռուստատեսության հետ չենք աշխատել, որովհետև մեր շուկայում գործող գներով հնարավոր չէ բարձր որակ տալ: Մենք շեղեցինք մեր վեկտորը դեպի ռուսական և իսրայելական շուկաներ: «Անտարեսի» ամենալուրջ արդյունքի հասած ոլորտը պոլիգրաֆիան է, որտեղ մենք կարողանում ենք տալ լավագույն որակը Հայաստանում՝ կատարելով շատ նորամուծություններ: Ունենք տասից ավելի ամսագրեր և թերթեր, որոնց մի մասը հրատարակում ենք մեր հովանավորությամբ: Եվ ընդհանրապես ցանկացած միջոցառում, որ հանուն է և Հայաստանում կարող է ինչ-որ բան փոխել, և մեր ուժերի սահմաններում է, ապա մենք անպայման օգնում ենք դիմացինին ձեռք ձեռքի բռնած ևս մի քայլ էլ առաջ գնալ:

—Ինչպե՞ս եք համախոհներ գտնում Ձեր ոլորտում և որոշում համագործակցել այս կամ այն կազմակերպության հետ:

«Անտարեսն» ունի բազմաթիվ գործընկերներ, բիզնեսի մասնակիցներ, և մենք հպարտ ենք դրա համար: Ունենք գերմանացի, լեհ, չեխ, բուլղարացի, ռուս, ուզբեկ, լատվիացի, վրացի գործընկերներ: Եվ այդ ամբողջը ի շնորհիվ նրա է, որ մարդիկ մեր մեջ գաղափարակից են գտել: Մենք գործընկերներ ունենք ոչ միայն Հայաստանում, այլև Մոսկվայում, Տաշքենդում, Թիֆլիսում, Փարիզում: Եվ ամենուր աշխատում ենք՝ ելնելով մի քանի սկզբունքներից. գործընկերդ պիտի հնարավորին չափ բանիմաց լինի իր պետությունից, պիտի լինի տեղի բնակիչ, լինի հզոր, կայացած, որն էլ բերում է ազնվության չափանիշներին: Բիզնեսը կերտում ու մաքրում է մարդուն: Դա նման է փողի, որը կարողանում է ցույց տալ Աստծո ստեղծած ամենաբարդ մեխանիզմի՝ մարդու ինչպիսին լինելը: Ես արդեն 18 տարի զբաղվում եմ բիզնեսով, և շատ եմ հանդիպել, որ մարդիկ կամ ընկնում են փողի ճանկը կամ օգտագործում են փողը որպես միջոց, ինչպես կօգտագործեին ջուրը, թուղթը, լույսը: Վերջիններս փողը դարձնում են միջոց՝ ինչ-որ նպատակի հասնելու համար, ու ինչքան վեհ է այդ նպատակը, այդքան այդ միջոցը կարևոր է հասարակության համար: Ասեմ նաև, որ «Անտարեսը» համագործակցում է գրեթե իր բոլոր մրցակիցների հետ: Մենք համոզված ենք, որ հաջողությունը համագործակցության մեջ է: Մենք կարողանում ենք հասնել շատ ավելի մեծ արդյունքների իրար հետ, քան իրար խանգարելով: Համատեղ քայլեր ենք կատարել «Հայաստան» և «Զանգակ» հրատարակչությունների հետ: «Անտարեսի» բազմաթիվ մրցակիցները սպասարկվում են մեր տարբեր ձեռնարկությունների կողմից, որովհետև մենք մեր գործընկերոջը չենք նայում որպես մրցակցի և արտադրանք ենք տալիս առանց մեր պիտակի: Օգտվելով միմյանց ծառայություններից՝ առաջին հերթին ստեղծում ենք մասնագիտական շուկա:

-Երբ սկսում էիք ձեր գործունեությունը, պատկերացնու՞մ էիք, որ մի օր այսպիսի արդյունքների եք հասնելու:

-Սա մեծ արդյունք չէ: Եթե չլիներ հոկտեմբերի 27-ի ողբերգությունը, մենք այսօր կհասնեինք շատ ավելի մեծ արդյունքների, և ոչ միայն մենք: Հայաստանյան ձեռնարկությունները մրցակցային դաշտից դուրս են, և մենք անընդհատ լողում ենք ալիքին հակառակ: Ցանկացած պրոֆեսիոնալ մարդ պիտի հասկանա, որ երբ որ դաշտը դառնում է մեկ քայլ ավելի բարձր ու ավելի հարուստ, ապա պրոֆեսիոնալը այդտեղ ավելի շատ փող կարող է աշխատել, ու ցանկացած պրոֆեսիոնալ պետք է նպաստի դաշտի կարգավորմանն ու ամրապնդմանը: Մյուս կողմից, չպիտի մոռանալ քաղաքացի լինելու մասին: Ես չեմ ուզում պիտակներ կպցնել, բայց այսօր մեր բիզնեսում կան մարդիկ, ովքեր որպես քաղաքացի չեն ձևավորվել: Այս 18 տարիները, որ ես անցել եմ բիզնեսում, դրսևորել եմ ինձ ոչ այնքան որպես լավ բիզնեսմեն, որքան որ լավ քաղաքացի: Ի շնորհիվ մեր պահվածքի՝ մենք կարողացել ենք հարկային դաշտում լուրջ փոփոխություններ կատարել: Միշտ եղել ենք ըմբոստ և կարողացել ենք ապացուցել, որ մեր պետության համար լավ հարկատու ենք, լավ ներմուծող ու արտահանող: Եվ բնավ պարտադիր չէ իշխանությունների համար էլ լավը լինել կամ մաքսային մարմինների համար լինել հաճելի հաճախորդ: Այստեղ ես ուզում եմ շատ կարևոր միտք ասել բիզնեսմենի տեսանկյունից. քանի դեռ հարկային տեսուչի աչքում գործարարը հանդես է գալիս որպես հանցագործ, Հայաստանը չի դառնա պետություն, էլ չենք խոսում հասարակության մասին: Եթե գործարարը չի ընկալվում որպես արարող, որպես կազմակերպող, որպես աշխատատեղ ստեղծող, որպես Հայաս-

տանի համբավը դրսում ու ներսում բարձրացնող մեկը, ապա Հայաստանի վիճակը չի բարելավվելու: Իշխանությունների գործը պետք է լինի գործարարին ներկայացնել որպես Հայաստանը առաջ տանող, առաջ մղող ուժ՝ հաշվի առնելով առաջին հերթին իր իսկ շահերը: 2008-2009 թթ. ու համոզված եմ, որ նույն բանը կլինի նաև 2010-ին, գործարարները, շահույթ չստանալով, հնարավորության սահմաններում պահել են աշխատատեղերը: Ձեռնարկություններ կան, որտեղ ոչ միայն աշխատատեղերը չեն պակասել, այլև աշխատավարձերը չեն նվազել: Նման պայմաններում արտասահմանում փակվում էին հազարավոր ձեռնարկություններ: Մեզ մոտ էլ, իհարկե, կան փակված ձեռնարկություններ, բայց նրանք, ովքեր մնացել են, նրանից է, որ գործարարները ոչ իրենց բարեկեցությունը, ոչ էլ ձեռնարկության շահերը չեն համարել առաջնահերթ, այլ կարևորել են հասարակության շահերը: Հայաստանի գործարարությունը ցույց տվեց, որ ամենադժվար պահերին անգամ շարունակում է նվիրված մնալ հասարակությանն ու պետությանը: Չեմ ասում իշխանություններին, որովհետև չպետք է իշխանություններին նվիրվել, հակառակը, պիտի իշխանությունը ծառայի պետությանը, բիզնեսին և հասարակությանը:

- Ի՞նչ կարգախոսով եք առաջնորդվում:

Մեր հասարակության մեջ, ինչպես միշտ, և հատկապես այսօր, բարձր է գնահատվում ազատությունը, ճշմարտությունը, պատիվը: Պահանջարկը հսկայական է, իսկ առաջարկությունները՝ փոքրաթիվ: Ներդրողները, պետությունների կառավարությունները, միջազգային հիմնադրամները պատրաստ են վճարել հսկայական գումարներ նրանց, ովքեր չեն խաբում, չեն գողանում և պատրաստ են իրենց վրա պարտականություններ վերցնել: Ես գնահատում եմ ազատությունն ու վաճառում եմ ճշմարտություն:

-Ի՞նչ կմաղթեիք մեր երիտասարդներին:

-Եղե՛ք մի քիչ ավելի համառ, որպեսզի ձեր վեհ գաղափարները հասցնեք տեղ: Սիրելիներ՛ս, դուք չեք սիրում գիրք կարդալ, անգամ, եթե ասում եք, որ ինտերնետն է մեղավոր, դուք անգամ խուսափում եք ինտերնետով տեղեկատվություն ստանալ: Ես սա գիտեմ թե՛ իմ ուսանողներից, թե՛ իմ երեխաներից, թե՛ դպրոցներից, թե՛ վաճառվող գրքերի քանակից: Մեր պետությունը, որ հայտնվել է այս աշխարհաքաղաքական իրավիճակում, իրավունք չունի ինքն իրեն մտավոր շրջափակման մեջ դնելու: Այսօր մտավորականության լավագույն ներկայացուցիչները լքել են Հայաստանը, և ես ցավում եմ, որ մեր երկրում նման իրավիճակ է ստեղծվել: Մենք պիտի կարողանանք վերադարձնել այդ մարդկանց: Միակ ելքը կրթվելն ու ինքնակրթվելը պետք է լինի:

Նյութը պատրաստեց Արփի Խաչատրյանը

Ի լուր համայն աշխարհի...

Նախորդ տարվա վերջին մի աննախադեպ ու անսպասելի ցուցահանդես բացվեց կ/թ Մոսկվայի ճեմասրահում: Այն երևի թե անսպասելի էր մեր հասարակության համար, հակասական խոկումների աղբյուր... Օռլանդո Կառլո Կալումենոյի բացիկների հավաքածուից ցուցադրվում էր «Հայերը հարյուր տարի առաջ Թուրքիայում» պատկերաշարը: Թուրքիայում ու եվրոպական երկրներում տպագրված հայկական կյանքին ու կենցաղին նվիրված ավելի քան 500 փոստային բացիկներ պատմում էին 1900-1910 թթ. հայերի սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի և այլ բնագավառների մասին՝ ներկայացնելով տարբեր քաղաքների հայկական բնակելի թաղամասերը, հայկական եկեղեցիները, վանքերն ու դպրոցները, հայերին պատկանող գործարանները, հյուրանոցները, առևտրի տները, մանկատներն ու հիվանդանոցները: Ցուցահանդեսի նյութերը պատրաստված էին թուրք պատմաբան Օսման Քյոքերի և «Բիրզամանլար» յայընջըլըքի (հրատարակչություն) կողմից և առաջին անգամ հանրությանը ներկայացվել էին Ստամբուլում 2005թ.: Ցուցադրությունը տևել է 11 օր և ունեցել է 7000 այցելուներ, որն աննախադեպ ցուցանիշ է: Քյոքերի հավաստմամբ այն Թուրքիայում մեծ հետաքրքրություն է առաջացրել թե՛ թուրք, թե՛ հայ այցելուների մեջ, և կառավարության կողմից ոչ մի բացասական վերաբերմունքի չի արժանացել: Թուրք հասարակությունը, որ վերջին ութ տասնամյակների՝ պետական ընդգծված հակահայ քարոզչական ջանքերի շնորհիվ համոզված էր, որ իրենց հայրենիքում հազարամյակներ շարունակ ապրել ու արարել են միայն թուրքերը, որ բոլոր հինավուրց քաղաքներն ու ճարտարապետական գանձերը կառուցել են իրենց նախնիները, զարմացած էին, որ հարյուր տարի առաջ Թուրքիայում ապրել են հայեր, ովքեր նաև ստեղծագործել են ու կառուցել բազում հուշարձաններ՝ իրենց երկիրն ասպատակելու փոխարեն: Եվ այդ երկիրը ոչ միայն իրենց, այլև նրանց հայրենիքն է եղել:



Ձեռնարկն, անշուշտ, շատ ազնիվ էր, մանավանդ որ այն, բացի Ստամբուլից, եվրոպական մի շարք երկրների մայրաքաղաքներում ներկայացվել էր ինն անգամ, ինչը մտածելու տեղիք է տալիս: Մեծ ջանասիրություն և նվիրում է հարկավոր նման գործ ձեռնարկելու համար, այն էլ Թուրքիայում, ուր հայերի լինելիությունն ակնարկելն իսկ մեծ հանդգնություն է: Իսկ այս բացիկները կրում էին Անատոլիայում (Հայկական լեռնաշխարհ) հայկական մշակույթի շունչը հարյուր տարի առաջվանից մինչև մեր օրերը՝ կարծես կամուրջ դառնալով երեկվա ու այսօրվա մշակույթների միջև:

Ներկայացված էին նաև բացիկներ, որոնք հրատարակված

են եղել հայ հրատարակիչների կողմից, կամ լուսանկարված են հայերի կողմից: Այդ բացիկներից շատերի վրա մեսրոպյան սուրբ գրերով շնորհավորական նամակներ էին, տարբեր գրություններ:

Ինչ խոսք, ցանկալի է, որ այս ցուցահանդեսում ներկայացված բացիկների ողջ հարստությունն այսօր ներկա ու կենդանի մնացած լիներ մերօրյա Թուրքիայում… Ավա՜ղ, դա երազ է միայն, առասպել. նրանցից մի փոքր մասն անգամ պահպանված չէ այսօրվա Արևելյան Թուրքիայում, երբեմնի ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ: Հեղինակն այս բոլորը ներկայացնում էր խոր հարգանքով և մասնագիտական մեծագույն լրջությամբ: Առանց ծանձրանալու և դժգոհելու մանրամասնորեն պատասխանում էր այցելուների, տվյալ դեպքում՝ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիրակության ակումբի անդամների հարցերին:

Ցուցահանդեսը շատ էր հագեցած, բայց այստեղ մի այլ բան էլ կար. հայ մարդը դիտում էր հարյուր տարի առաջ իր ունեցածը, որ կորցրինք այնքա՜ն բիրտ ձևով վռնդվելով մեր հայրենի եզերքից: Գուցե մենք էլ ենք մեղավոր այդ զարհուրելի նախճիրի համար, որ չկարողացանք կամ չհանդգնեցինք ինքներս մեզ պաշտպանել մեր սեփական տանը «հյուրընկալած» նորաբույս հարևաններից, որ այսօր այդ եղեռնագործներից սերած մի մտավորական, հոգու խորքում հասկանալով իր պապերի ձեռքով կատարված զարհուրելի նախճիրը, հոգեկան մեծ ամրություն և կորով դրսևորելով, նրանց գործած մեղքի խոր զգացումով կարողացել էր հավաքել նյութեր և ցուցադրել ի լուր համայն աշխարհի:

Քեյթի Գունդակչյան

Ես Եռաբլուրից Արևմտյան Հայաստանը տեսնում եմ…

Յուրաքանչյուր պետության ճակատագրական հանգրվաններում ասպարեզ են իջնում անհատներ, ովքեր անշահախնդիր նվիրվածությամբ և սեփական ժողովրդի ուժերի նկատմամբ մեծ հավատով համախմբում, միաբանում են հասարակությանը: Նրանք իրենց օրինակով վարակում են մյուսներին, օգնում դրսևորել ազգային դիմագծի լավագույն կողմերը: Այդ անհատներն ազգի կենսագրության մատյանում նույնիսկ դարեր հետո «ներկա» են ստանում: Արձակագիր, հրապարակախոս, թարգմանիչ Գրիգոր Զանիկյանի «Եռաբլուր» վիպական դիմաշարի հերոսները հենց այդպիսին են: Մարդիկ, ովքեր արցախյան ազատամարտում չվարանեցին իրենց կյանքը դնել հայրենիքի զոհասեղանին: Նրանց շարքերում էին նաև շատ համալսարանականներ՝ Թաթուլ Կրպեյան (պատմ. ֆակ.), Աստվածատուր Ալեքսանյան (ռադիոֆիզ. ֆակ.), Նորայր Մարության (բանաս. ֆակ.), Արթուր Փարսադանյան (երկրաբան. ֆակ.) և ուրիշներ: Հետևաբար պատահական չէր, որ գրքի շնորհանդեսը տեղի էր ունենում ԵՊՀ-ում, և դրա նախաձեռնողն ու կազմակերպիչը «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբն էր Գրողների միության հետ համատեղ:

ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանը հանդես եկավ բացման խոսքով՝ արժևորելով Զանիկյանի վաստակը արդի հայ արձակի, հրապարակագրության, թարգմանության ասպարեզներում: Նա նշեց, որ գրքին ըստ արժանվույն է շնորհվել Ռուսաստանի հայերի միության ու Գրողների միության՝ «Հայը 21-րդ դարասկզբին» արձակ ստեղծագործության մրցույթի առաջին մրցանակը: Ըստ նրա՝ այս գրքով հեղինակը ապացուցում է, որ առանց մեր անցյալի արժևորման մենք ապագա չունենք:

Շնորհանդեսին ներկա գեներալ-մայոր Աստվածատուր Պետրոսյանը խոստովանեց, որ երբեք չի տարբերել, թե պատերազմի ժամանակ Գրիգոր Զանիկյանը հասարակ զինվո՞ր էր, թե՞ գրողհրապարակախոս: Նա հեղինակին արժանացրեց «Արծիվ-մահապարտների» «Վազգեն Սարգսյան» պատվոնշանի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հայր Իգնատիոսը ներկայացրեց գրքի հոգևոր խորհուրդը: Ըստ նրա՝ հետևյալ խոսքերը ողջ աշխատության շունչն ու ոգին են. «Հայ ծնվելուց ավելի մեծ երջանկություն կարելի՞ է երազել: Ծնվել ու գիտակցել, որ քոնն են Գրիգոր Լուսավորչի խաչը, Մաշտոցի երկնառաք գրերը ու նաև, նաև՝ Դավթի Թուր Կեծակին: Թուր Կեծակին վիպասքներում չէ, թրկապումդ է, օրհասի պահին հանելու ես պատյանից, գրոհելու ես ոսոխի վրա, որ պաշտպանես Գրիգոր Լուսավորչի խաչը, Մաշտոցի երկնառաք գրերը, հայ լինելու քո երջանկությունը»:

Միջոցառմանը ներկա էր էստոնացի նկարիչ և «Եռաբլուր» գրքի հերոս Ֆելիքս Բութմանը, ով պատերազմի տարիներին կռվել է մեր հայրենիքի համար, այնուհետև սիրահարվել Հայաստանին ու հայ կնոջ՝ մեկընդմիշտ կապվելով այս հողին: Նա հայերենով նշեց, որ շնորհակալ է Զանիկյանին իր անունը հայ ազգի հերոսների կողքին դնելու համար, ապա շարունակեց. «Եթե էլի պահանջվի կռվել այս հողի համար, ապա ես պատրաստ եմ»:

Ելույթներ ունեցան նաև ազատամարտիկներ, ուսանողներ, զոհված հերոսների հարազատներ: Նրանց խոսքն ընդմիջվում էր գուսան Հայկազունի՝ Արցախի հերոսամարտին նվիրված հեղինակային երգերի կատարումներով, Ամիրան Գալստյանի ելույթներով: Վերջինս հատվածներ էր ներկայացնում «Եռաբլուր» գրքից:

Վերջում Գրիգոր Զանիկյանը հորդորեց բոլորին ոչ մի ակնթարթ չմոռանալ, որ մենք հաղթանակած ազգ ենք, քանզի Եռաբլուրում միայն հաղթողներն են. «Եռաբլուրը մեզ համար գերեզմանոց չէ, այն մեր փառքի բարձունքն է, արժանապատվության, հերոսականության վկայությունը: Այն մի պատգամ ունի՝ ձգտել նորանոր հաղթանակների: Այսօր, երբ մեր հավերժական թշնամին առաջարկում է ուրանալ Արցախի արդար դատը, 1915 թիվը, ապա պիտի անդրդվելի մնանք, հավատանք, որ հաղթելու ենք: Ես Եռաբլուրից Արևմտյան Հայաստանը տեսնում եմ, Եռաբլուրից ուղիղ վար ենք գնալու և հաղթելու ենք»:

Արևիկ Սարոյան

Քսանամյա մահապարտը

Եռաբլուրում խորին լռություն է: Մեղմօրոր քամուց պոկված տերևները հանդարտորեն իջնում են սրբավայր դարձած շիրմին: Երբեմն զգացվում է աշնան սառը շունչը, սակայն շիրմաքարի մոտ հավաքվածների սրտերը լի են ջերմությամբ: Շիրիմը ԵՊՀ զոհված ազատամարտիկ Վարդան Հովհաննիսյանինն է, հավաքվածները նրա մտերիմներն ու ԵՊՀ «Վարդանանք» ակումբի անդամներն են, որ արդեն տասնյոթ տարի շարունակ սեպտեմբերի 11-ին այս սրբավայրում իրենց հարգանքի տուրքն են մատուցում հայրենանվեր հերոսին: Այստեղ տիրող ոգեղեն մթնոլորտը մարդկանց սրտերը լցրել է և՛ հպարտությամբ, և՛ ափսոսանքով, և՛ արցունքներով: Ու մի խորին թախիծ կա ամենուր:

Ահա այսպիսի զգացմունքներով էլ ներկաներն ուղևորվեցին ԵՊՀ-ի տնտեսագիտության ֆակուլտետ, ուր Վարդան Հովհաննիսյանի անունը կրող լսարանում հավաքվել են բազում համալսարանականներ և սպասում են Վարդանի մտերիմներին, որոնց միջոցով պետք է բացահայտեն Վարդան մարդուն, ընկերոջը, որդուն, հերոսին:

Վարդան Հովհաննիսյանը 1988թ. ընդունվել է ԵՊՀ մեխանիկայի ֆակուլտետը, ապա երկրորդ կուրսից տեղափոխվել է տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետ, որտեղից էլ, կիսատ թողնելով ուսումը, մեկնել է պատերազմի դաշտ՝ դառնալով Արցախի ազատագրման գործի նվիրյալը: Վարդանը բազմակողմանի զարգացած անձնավորություն էր, լայն էր հետաքրքրությունների շրջանակը: Սիրել է երգը, երաժշտությունը, բնությունը, կենդանիներին, զբաղվել է սպորտով: 1991-1992 ուս. տարում երրորդ կուրսի ուսանող էր՝ ղարաբաղյան շարժման հոգսերով լեցուն: Որոշել էր մեկնել Արցախ, մասնակցել նրա ազատագրմանը: Ուղի էր փնտրում երկրապահ ջոկատների մեջ մտնելու համար: 1992թ. հանձնեց տարեվերջյան քննությունները, փոխադրվեց չորրորդ կուրս, սակայն չհրաժարվեց Արցախ գնալու իր մտադրությունից: Որոշածն սկզբում չէր իրականանում. ջոկատների հրամանատարները մերժում էին՝ պատճառաբանելով, որ ուսանող է, ջահել է: Եվ հանկարծ հեռուստացույցով լսվեց Վազգեն Սարգսյանի կոչը՝ մահապարտների ջոկատ կազմելու վերաբերյալ: Վարդանը ծնողներից թաքուն անդամագրվեց այդ ջոկատին.

այլևս ոչինչ չկարողացավ ետ պահել նրան: Բարեկամները փորձել են համոզել, ետ պահել, իսկ նա աներեր պատասխանել է. «Հետո էլ կարող եմ սովորել, հիմա զինվոր է պետք»: Նույնիսկ Վազգեն Սարգսյանն էր նկատել ու իմանալով, որ ԵՊՀ-ի ուսանող է, համոզել էր, որ գնա, քննությունները հանձնի, կիբեռնետիկ դառնա: Վարդանը դարձյալ իրենն էր պնդել. «Ես պիտի նախ Արցախ հասնեմ, իմ հայ լինելու, տղամարդ կոչվելու քննությունը հանձնեմ»: Ու վերցրեց զենքը, զինվոր դարձավ, «Արծիվ-մահապարտների» գումարտակի կազմում մեկնեց Արցախ: Եվ մարտի դաշտում գերազանց հանձնեց իր՝ հայ տղամարդ կոչվելու քննությունը: Մասնակցեց Մարտակերտի շրջանի ազատագրման մարտերին: Սեպտեմբերի 11-ին Վաղուհասի բարձունքի ազատագրման ժամանակ շատ քաջորդիների հետ ընկավ նաև Վարդանը:

Եվ ահա 17 տարի անց նույն լսարանում, ուր մի ժամանակ ուսանել է Վարդանը և իր պայծառ աչքերի կրակոտ փայլով լուսավորել այն, հավաքվել են նրա բարեկամները, մտերիմները, դասախոսները, ծնողներ՝ Նասլետ և Սալբի Հովհաննիսյանները, Շուշիի ազատագրման հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանը, մարտական ընկերներ՝ Սպարտակ Մաթևոսյանը, Աստվածատուր Պետրոսյանը՝ հավերժացնելու Վարդանի հիշատակը և ուսանողներին բացահայտելու Վարդան հերոսին:

«Արծիվ-մահապարտների» ջոկատի գլխավոր համակարգող Աստվածատուր Պետրոսյանը պատմեց, որ երբ 20-ամյա ուսանողին շտաբ է հրավիրել, բացատրել, թե ուր են իրենք գնում, ինչու է գումարտակը «Արծիվ-մահապարտների» կոչվում, Վարդանը լուռ լսել է և ոչ միայն չի երկնչել, այլև գտել է, որ կիբեռնետիկայի կրթաճյուղի իր գիտելիքներով գումարտակին կարող է շատ օգտակար լինել: Այնուհետև մեկնելուց առաջ մոտեցել է և կտրուկ ասել, թե ուզում է գնդացրորդ դառնալ, որ առաջին գծում լինի և ռազմական գործողությունների անմիջական մասնակիցը դառնա:

Մարտական ընկեր Սպարտակ Մաթևոսյանը պատմեց. «Կեսգիշերին լսեցինք «վե՛ր կաց» հրամանը, սկսեցինք վերելքը դեպի Վաղուհասի բարձունքը, վերջապես ցերեկվա ժամը 2-ին հնչեց գրոհի ազդանշանը: Սեյրան Աթանեսյանն իր տղաներով թեքվեց դեպի ձախ, իսկ աջից գնում էին Սամվել Շահմուրադյանը, Գագիկ Յոլչյանը, Վարդան Հովհաննիսյանը և ես: Հենց անտառ մտանք, թշնամին սկսեց հերթազարկերը: Ազերիները կրակում ու արագ փախչում էին, որ մեզ մտցնեն անտառի խորքը: Գնդակների սուլոցի տակ կրակելով ու վազելով՝ ես կորցրեցի Սամվելին, Գագիկին, Վարդանին: Հանկարծ գետինը ցնցվեց, հողի բեկորները վեր խոյացան, նայեցի ոտքերիս տակ, տեսա խո-

տերի միջով ծգվող լարը և հասկացա, որ թշնամին մեզ ներքաշել է ականապատված տարածք: Ով կարողացավ, դուրս պրծավ մահվան այդ օղակից, որտեղ հակառակորդ չկար, միայն պայթյուն էր ու մահ: Քիչ անց բերեցին Սամվելի ու Գագիկի դիակները: Գիշերն անցկացրեցինք գետի ափին: Ամբողջ գիշեր չկարողացա քնել, աչքերիս առջև Սամվելի և Գագիկի խոցված մարմիններն էին, սիրտս մորմոքում էր ցավից, ի՜նչ տղաներ կորցրինք: Բայց ու՞ր էր Վարդան Հովհաննիսյանը, մեր 20-ամյա գնդացրորդը, ԵՊՀ-ի գերազանցիկ ուսանողը: Ակամա հիշեցի Մխիթարին, նա անընդհատ կրկնում էր. «Վարդանը մնաց, վերևում մնաց»: Նոր միայն անդրադարձա, որ Վարդանը չի թողել Վաղուհասի բարձունքը, գնդացիրով մեն-մենակ շարունակել է դիմադրությունը: Մենք երդվեցինք կենդանի, թե զոհված անպայման գտնել Վարդանին»:

Տասներեք օր անց միայն գտան Վարդանի մարմինը, նրան գտան ո՛չ կենդանի, ո՛չ զոհված, նրան գտան նահատակված, հերոսացած, անմահացած:

Հուղարկավորությունից հետո մայրը՝ տիկին Սալբին, չի կարողացել մոտենալ որդու գրասեղանին: Երկար ժամանակ անց միայն գրասեղանը կարգի բերելիս գտել է նրա հուշատետրը, որտեղ և վերջին գիշերը՝ Արցախ մեկնելուց առաջ, Վարդանը, մեծ բանաստեղծից ոգեշնչված, իր պատվիրանն էր թողել սերունդներին. «Այստեղ է, որ բաց ճակատով ու լեցուն հպարտությամբ պիտի վկայեմ, որ ես հայ եմ՝ զավակը մի ժողովրդի, որն իրոք շատ բան է տվել աշխարհի քաղաքակրթությանը և իր տվածի՝ ինձ համար ամենաթանկն ու գեղեցիկը, իմ հայրենասիրական ոգին է: Մեր ազգը չի կարող կործանվել այլ կերպ, բացի ինքնասպանությունից»:

Յուրօրինակ էր այս բաց հայրենասիրության դասը, իսկ ամենամեծ հայրենասիրության դասը, անշուշտ, Վարդանը պետք է տա այս լսարան մտնող իր հասակակից համալսարանականներից յուրաքանչյուրին ու իր փառահեղ արարքով պետք է ստիպի բոլորին ամենայն խորությամբ գիտակցել, թե ինչ է նշանակում 20 տարեկանում զոհել կյանքը հանուն հայրենիքի:

Լուռ նայում է Վարդանը ներկաներին, ծորում է հայրենասիրական ոգին նրա աչքերից ու կաթում ներկաներից յուրաքանչյուրի սրտին ու հոգուն:

Ծովինար Ստեփանյան

Եթե չզոհվեր, մեծ պատմաբան էր դառնալու…

Դեկտեմբերի տասնվեցը Վարդան Բախշյանի հիշատակի օրն է: Նա մեծ ոգու, վեհ արժանիքների տեր անձնավորություն էր, բարեկիրթ, արի: Եվ այսօր պատահական չէ, որ Արմավիր քաղաքի՝ հերոսի անունը կրող դպրոցում յուրաքանչյուր աշակերտ ծանոթ է նրա կյանքին ու սխրանքներին, մարտական ուղուն ու գաղափարներին:

Ես հավատում եմ, որ եթե Վարդանը չզոհվեր, մեծ պատմաբան էր դառնալու: Նա քաջ գիտակցում էր իր ժողովրդի՝ ազատ ու անկախ ապրելու իրողության կարևորությունը, այդ պատճառով էլ, անտեսելով պատերազմի վտանգավոր լինելու փաստը, հանուն հայրենի հողի պաշտպանության 1992-ին մեկնեց ռազմաճակատ՝ պատմաբանի գրիչը փոխարինելով հրացանով: Ռազմի դաշտում նա լավ գիտեր իր անելիքը. ուզում էր վրեժ լուծել թշնամուց և հետ բերել պապերի կորցրած հայրենիքը:

Այո՛, հեռահար էին Վարդանի նպատակները, բարձր էր նրա մտքի թռիչքը: Ցավով է լցվում սիրտդ, երբ մտածում ես, որ հայրենի հողն ազատագրած արծիվ տղաներն այսօր չկան: Տղաներ, ովքեր մի մարդու նման համախմբվեցին ազերիների դեմ: Վարդանի ու նրա մարտական ընկերների նպատակը մեկն էր. ազատագրել անառիկ Շուշին, որ հետո էլ գերությունից ազատեին Մասիսը: Սակայն նրանցից շատերն անգամ Շուշիի ազատագրումը չհասցրեցին տեսնել, իսկ Մասիսինը, որպես սրբազան պատգամ, թողեցին մեզ ու մյուս սերունդներին: Եվ քանի դեռ անկատար են նրանց երազանքները, Վարդանի ու նրա նման խիզախների անունները շարունակելու են անմար մնալ մեր սրտերում: Ուստի պատահական չէր, որ 2009-ի դեկտեմբերի 16-ին «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբն իր նախագահ Սաթենիկ Աբրահամյանի գլխավորությամբ կրկին այցելեց Վարդան Բախշյանի անվան թիվ 2 դպրոց՝ ևս մի անգամ հիշելու հերոսի անցած ճանապարհն ու այդ բոլոր խոհերով կիսվելու աշակերտների հետ ակումբի՝ ավանդական դարձած «Դասը վարում են համալսարանականները» ծրագրի շրջանակներում: Ներկա էին ազատամարտիկի մայրը, քույրը և մարտական ընկերները: Ակումբականներն այցելեցին նաև հերոսի շիրմին: Համատարած լռությունը մարդու սիրտը լցնում էր մի անսահման թախիծով, բայց դեպի երկինք բարձրացող խնկաբույրը հիշեցնում էր մարդկային հոգիների անմահության մասին: Ու մի պահ կարծես ամեն մեկն ինքն իրեն խոստացավ անհրաժեշտության դեպքում կրկնելու Վարդանի անցած ճանապարհը: Վարդանի և իր նմանների կորուստը ծանր վիշտ է, բայց դա նաև մի կարևոր ու դժվարին լուծ է, որ 1993-ի դեկտեմբերի տասնվեցից իրենց ուսերին են կրում Բախշյանների ընտանիքի անդամները՝ շարունակելով Վարդանի դասերը…

Կարեն Մուրադյան

ՆԺԴԵՀՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի նախաձեռնած բազմաթիվ միջոցառումների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում մեծանուն հայերի գործունեությանն ու ստեղծագործական ժառանգությանը նվիրված քննարկումներն ու ընթերցումները: Ընթերցումներ, որոնք ոչ միայն հարգանքի տուրք են անցյալի և ներկայի ազգանվեր հայ գործիչներին, այլև ստեղծագործական խանդ են առ հայ իրականության բարեփոխում, մերօրյա մարդու և հայի առջև ծառացած խնդիրների լուծում: Ասվածի վկայությունն են Գ. Նժդեհի ստեղծագործություններին նվիրված ընթերցումները, որոնց միջոցով մերօրյա սերունդն, ի դեմս վարդանանքցիների, հնարավորություն է ստանում ոչ միայն ևս մեկ քայլ կատարել հայրենաճանաչության ճանապարհին, այլև Նժդեհի գաղափարական «ծաղկաստանից» մեղվի պես դուրս բերել ինտելեկտուալ այն «նեկտարը», որը միտված է մեր բարոյահոգեբանական թերիների աշխատորոշմանն ու հաղթահարմանը:

Նժդեհը շատերին է հայտնի, բայց քչերն են գիտակցում այն, թե ինչու է մեծանուն հայն արժանի հայտնի լինելուն: Այս առումով նժդեհյան ընթերցումները նպատակ ունեն ոչ այնքան Նժդեհի մեծության փաստումը, որքան այդ մեծության հասկացումը: Վերջին խնդրի լուծման համար վարդանանքցիները 2008-2009 թթ. մի շարք դասախոսություններ լսեցին Նժդեհի մտածողի մասին, պարզաբանումներ ստացան մեծանուն հայի ստեղծագործական ժառանգության հետ կապված տարաբնույթ կնճռոտ հարցերի վերաբերյալ: Սակայն դասախոսությունները միայն և միայն նախապատրաստական շրջանն են նժդեհաճանաչության գործի, քանզի նրա տեսական ժառանգությանը նվիրված ինքնուրույն ուսումնասիրությունների կյանքի կոչմամբ պետք է զարկ տրվի առավել խոր և ամբողջական հասկացմանը: Պատահական չէ, որ յուրաքանչյուր ամիս «Վարդանանքում» նժդեհյան բնագրերի որոշակի հատվածների ընթերցանությամբ, վերլուծությամբ և դրանց շուրջ առկա կարծիքների բախման միջոցով անց էին կացվում նժդեհյան ընթերցումներ, որոնք հնարավորություն էին տալիս խուսափել միակողմանիությունից, դոգմատիկ նժդեհապաշտությունից:

Իհարկե, գործը սկսված է, բայց այն իր հանգուցալուծմանը չի հասել, ինչը վկայում է այն մասին, որ 2010թ. կլինի նժդեհյան ընթերցումների տրամաբանական շարունակության, ինչպես նաև այլ մեծանուն հայերի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության և հասկացման տարի: Այս հրամայականը «Վարդանանքի» համար հաճելի պարտականություն է, քանզի առաջնորդվելով նժդեհյան ոգով՝ հայրենասիրական սերնդի կերտման այս դարբնոցը ճշմարիտ հայրենասիրությունը տեսնում է հայրենաճանաչության և հայոց ստեղծագործական արարումների համամարդկային բովանդակության հարզատման և հետևողական պաշտպանության մեջ:

Արմեն Սարգսյան

2009թ-ին մեծ շուքով ամբողջ հանրապետությունում ողջ տարվա ընթացքում նշվեց կոմպոզիտոր, ազգագրագետ, մանկավարժ, խմբավար, երգիչ, արվեստագետ Կոմիտասի 140-ամյակը: Գիտակցելով Կոմիտասի մեծությունը՝ նորից հայացք ենք ձգում նրա ստեղծագործական ուղու վրա ու փորձում հասկանալ՝ ո՞վ էր նա: Կոմիտասի մեծագույն վաստակը ազգային դասական երաժշտության հիմնադրումն է ու նոր ուղիների բացումը դրա հետագա զարգացման համար: Նա էր, որ հայտնաբերեց հայ երաժշտության ինքնատիպությունը և պաշտպանեց դրա ինքնուրույնության գաղափարը: Կոմիտասի համար հայ գեղջուկի երգը հարստությունների մի ամբողջ շտեմարան էր, և նա իր կատարմամբ հայ հոգևոր արժեքները տարածեց ու հասցրեց ճանաչման: Նրա կատարողական վարպետության մասին վկայում են ունկնդիրների այն կարծիքները, որ հնչել են Թիֆլիսում տեղի ունեցած համերգից հետո. «Վանականի սև հագուստիդ տակ տեսնում եմ քո սիրաբորբոք սիրտը», «Եթե մեր եկեղեցիներում այսպես երգեին, այնտեղ մտնելու համար պետք կլիներ ժամերով հերթ կանգնել…» և այլն:

Խոսելով Կոմիտասի մասին՝ չենք կարող չանդրադառնալ նրա հիմնած խազային համակարգին: Գրի առնելով բանավոր ձևով պահպանված հոգևոր մեղեդիները, որոնք որոշակի փոփոխություններ էին կրել, Կոմիտասը հույս ուներ, որ այս համակարգը հնարավորություն կտար հաղորդակցվելու շուրջ ութ հարյուրամյակի ընթացքում գրի առնված արվեստի նմուշներին: Խազային համակարգի վերծանման ուղղությամբ նա երկարամյա աշխատանք է կատարել, բայց այդ արդյունքներն այսօր հայտնաբերման և ուսումնասիրության կարիք ունեն…

Կոմիտասի մեծագույն երազանքը հայ երիտասարդության համար երաժշտանոց ստեղծելն էր, որը պիտի ծառայեր հայկական և եվրոպական երաժշտության տարածմանը, հիմք դներ երաժշտական գրականության հրատարակությանը, կազմակերպեր զեկուցումներ երաժշտական խնդիրների շուրջ, ունենար մշտական երգչախումբ: Ցավոք, Կոմիտասին չհաջողվեց երաժշտանոց հիմնել, բայց այսօր Երևանում վեր է հառնում նրա անունը կրող կոնսերվատորիան: Ինքս սովորում եմ այստեղ ու հաստատ կարող եմ ասել, որ այդ հաստատությունում ամեն ոք գլուխ է խոնարհում նրա անվան ու կատարած աշխատանքի առջև:

Յուրաքանչյուր հայ պիտի գիտակցի, որ իր պարտքն է պաշտպանել ու պահպանել այն մեծ ժառանգությունը, որ թողել է Կոմիտասը:

ԵՊՀ ուսանող Նելլի Գասպարյան

Անցյալը՝ պարզաբանված, ներկան՝ որոշակի, գալիքը՝ հաստատ

Սիրելի՛ ընթերցող, այսուհետ մենք վերոնշյալ խորագրի ներքո հնարավորություն կունենանք զրուցելու տարբեր հոգևորականների հետ՝ քննարկելով թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ շատ խնդիրներ: Մեր առաջին զրույցը Ս. Ծննդյան և Ամանորի տոների շուրջ է, որոնք թեև ամենասպասվածն ու ամենատարածվածն են, բայց ունեն լրացուցիչ բացատրության կարիք: Այդ պատճառով էլ մենք դիմել ենք առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Շահե քահանա Հայրապետյանին, ով էլ սիրով պատասխանել է մեր հարցերին:

-Տեր հայր, ինչու՞ են Ամանորի և Ս.Ծննդյան տոներն այդքան սիրելի մարդկանց:

-Մարդկության պատմության մեջ տեղի ունեցավ փոփոխություն հենց այն ամսին, որը համընկնում է Ամանորին: Դա Քրիստոսի փառավոր Ծնունդն էր, որը շրջադարձային եղավ ողջ տիեզերքի համար: Ինչու՞, որովհետև կատարվել էր մի մեղք, որը ծանրացել էր մարդկության վրա և տանում էր մի իրականության, որը նրա համար չէր նախատեսված, այլ՝ սատանայի: Եվ ահա մարդկության փրկության համար հրեշտակային ավետիսով ծնվում է Մանուկ Հիսուս՝ դառնալով Փրկիչն աշխարհի: Մարդիկ պետք է, որ ենթագիտակցորեն հիշեն այս ամենը: Մարդկային ներքին էությունը կարիք ունի նորոգման: Մենք ամեն տարի հունվարին գնում ենք դեպի հունվարի վեց և նորոգվում ենք Քրիստոս Հիսուսի Ծննդյամբ:

-Վերջին տարիներին նկատելի է, որ ժողովուրդը, առօրյա հոգսերից ու դժվարություններից հոգնած, հաճախ Ամանորը նշելու ցանկություն չի էլ ունենում: Ի՞նչ խորհուրդ կտայիք:

-Ես կուզեի, որ այդ օրը շատերը, հատկապես երիտասարդները, եկեղեցի այցելեն, որպեսզի ստանան այդ դառնության պատասխանները: Ո՞վ է այդ ամենը վերցնելու նրանցից, եթե ոչ Քրիստոս Հիսուս, Նրա տիեզերական սերը: Եկեք միասին այդ սիրո մեջ լինենք: Մեր հոգևոր փրկության համար միասնական աղոթք է անհրաժեշտ:

-Մարդիկ հաճախ բողոքում են նաև այն բոլոր շռայլություններից, որ Ամանորին թույլ են տրվում մեր ընտանիքներում: Ինչպե՞ս կարելի է խուսափել դրանցից:

-Ճիշտն ասած, դա շատ հեշտ է: Ուղղակի պետք է դիմակը նետել մի կողմ, խուսափել մրցավազքից, որ ստեղծվեց սովետական շրջանում: Այդ տարիներին ամեն ինչ շատ ճոխացվեց, որ մոռացվի Քրիստոսի Ծնունդը: Մենք պետք է ուղղակի կարողանանք խուսափել նախկին սխալներից և հագնենք այն զգեստը, որ

ունեցել ենք դարեր շարունակ: Նոր տարին միշտ պահքի շրջանի մեջ է ընկել, որովհետև մենք դեռևս նոյեմբերի վերջերին նշում ենք Հիսնակաց պահքի մասին, որ հիսուն օրեր մնացին Հիսուսի Ծննդյանը: Եվ այդ շրջանի մեջ ընկնող Նոր տարվա ժամանակ մենք ունենում ենք այնպիսի կերակուրներ, որ տարվա ընթացքում գրեթե սեղան չեն գալիս: Այդ հիշողությունը հենց պահքի շրջանից է:

-Տեր Շահե, հայ մարդն այսօր թեև նշում է Ս. Ծնունդը, բայց քիչ բան գիտի տոնի բուն խորհրդի մասին: Իմացությունները հիմնականում սահմանափակվում են կինոնկարներից ստացած տեղեկություններով, ավանդական կերակրատեսակների պատրաստումով և այլն: Քիչ են տոնի խորհուրդն իրապես ընկալողներն ու արժևորողները և այդ առիթով եկեղեցի հաճախողները: Ինչպե՞ս կարելի է Ս. Ծննդյան տոնը կրկին դարձնել հայ մարդու սեփականությունը:

-Նոր տարին ընդամենը տարեգլուխ է եղել, և դեկտեմբերի երեսունմեկի գիշերը ժամը տասներկուսին կատարված հայրապետական մաղթանքը ավետում է ամբողջ աշխարհին, որ ահա մոտ է Հիսուսի Ծնունդը, և թող տարին բարի լինի բոլորի համար: Մենք խնդիր ունենք վերականգնելու իրապես ազգային-փրկչական մի ծրագիր, որը կոչվում է ծուխ: Ի՞նչ է այն: Ժամանակին քահանան ճանաչում էր իր հավատացյալներին: Նա, առանց հարցնելու իր համայնքի անդամներին, այցելում էր նրանց և տալիս Ս. Ծննդյան ավետիսը: Այնուհետև օրհնում էր սեղանի վրա դրված Ծննդյան կերակրատեսակները և օրհնված ջրով ցողում ամբողջ տունը: Ավետարանի, աղոթքի և քարոզի ներքո բարիքը մտնում էր այդ ընտանիք: Ես համաձայն եմ, որ արվեստը շատ մեծ գործ ունի անելու, և իզուր չէ, որ մարդիկ հաճախ կինոնկարներից են ինչ-որ բաներ հիշում, բայց առանց քահանայագործության հավատքը մնում է կիսատ: Այսինքն՝ ես գիտեմ ինչ-որ բանի մասին, բայց մուտք չունեմ այդ աշխարհ: Ուղղակի մենք պետք է կարողանանք արժեհամակարգերը դնել իրենց տեղը՝ որոշելով՝ որն է առաջնային, որը՝ նվազ կարևոր: Մարդիկ հունվարի վեցին պետք է այցելեն եկեղեցի, ծոմ վիճակում հաղորդություն ստանան՝ ճաշակելով Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Այդ ավետիսով մեր սրտերը դառնում են բեթղեհեմյան քարայր, որի մեջ գալիս, հանգրվանում է Քրիստոս Հիսուս Իր սիրով, և օրը վերստին պայծառանում է մեզ համար, անցյալը՝ դառնում պարզաբանված, ներկան՝ որոշակի, գալիքը՝ հաստատ:

Հարցազրույցը վարեց Նար Վարդանյանը

Պայքարը դեռ շարունակվում է...

2009-ի հոկտեմբերի կեսերին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատակից, պատմ. գիտ. դոկտոր Հասմիկ Ստեփանյանը Իզմիրի «Դոքուզ էյլյուլ» համալսարանի հրավերով մասնակցել է միջազգային գիտաժողովի, որը նվիրված է եղել կանանց հիմնախնդիրներին ու առաքելությանը ամենատարբեր բնագավառներում: Գիտաժողովին մասնակցում էին 25 երկրներից հրավիրված մոտ 800 գիտնականներ: Կազմակերպիչն էր «Դոքուզ էյլյուլ» համալսարանի Բանասիրության ու մշակույթի ֆակուլտետը: Հայաստանի պատվիրակի զեկուցումն խորագիրն էր «Կինը պատմության մեջ», որն ամենամեծն ու ամենաներկայանալին էր և մեծ հետաքրքրություն ու հարցերի տարափ է առաջացրել: Այն նվիրված է եղել 19-րդ դարում պոլսահայ կանանց, մասնավորապես, բարձրաշխարհիկ խավի երեք «գրական սալոններին», որոնք մեկտեղել են Պոլսի հայտնի մտավորականներին, թուրքական կառավարող շրջանակների առաջադեմ դեմքերին, Պոլսում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներին, եվրոպական կապիտալիստական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում ներկայացնողներին, ռուս բարձրաստիճան զինվորականությանը, Պոլիս այցելած հայտնի դեմքերի և այլոց: Այս հավաքույթները կայսրությունում եվրոպականացման ներթափանցման, ֆրանսիական հեղափոխական գաղափարների տարածման, առաջադիմական հայացքների կրողների, երկրում մշակույթի տարբեր ասպարեզների զարգացման ջատագովների համագործակցության հիանալի օրինակներ են եղել:

Այս գիտաժողովը Թուրքիայի գիտական քաղաքականության յուրահատուկ ցույց էր, որը կոչված էր գիտական շրջանակներին ներկայացնելու ժամանակակից թուրք կնոջը գիտության ու հասարակական-քաղաքական կյանքում, ապացուցելու երկրի շահագրգռվածությունը կնոջը տեսնել ոչ թե ավանդական արևելյան գաղափարախոսության շրջանակներում, այլև աշխարհի առաջադեմ երկրների հետ համաքայլ առաջ ընթանալիս:

Հանդիպման երկրորդ մասը նվիրված էր 2007թ. Անկարայում «ԻԿԱՆԱՍ-38» արևելագիտական միջազգային համաժողովին, որը 150 տարվա պատմություն ունի, զբաղվում է հյուսիսաֆրիկյան երկրներից մինչև Հեռավոր Արևելքի երկրներով և իր հիմնադրմամբ պարտական է ֆրանսիացի գիտնականներին: «ԻԿԱՆԱՍ»-ին հյուրընկալելը պարտադիր է իր գիտության զարգացմամբ շահագրգռված յուրաքանչյուր երկրի համար: Թուրքիայում այն երկրորդ անգամ էր անցկացվում: Մասնակցում էին մոտ հազար գիտնականներ աշխարհի ամենատարբեր երկրներից և գիտնականների մեծ խումբ՝ Թուրքիայից: Հայաստանից այս գիտաժողովին մասնակցում էր Արվեստի ինստիտուտից գիտ. դոկտոր, Կոնսերվատորիայի պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը և հայատառ թուրքերեն գրականության մասնագետ Հասմիկ Ստեփանյանը: Թուրքական թերթերը նախապես ազդարարել էին, որ Հայաստանից 17 գիտնականներ են մասնակցելու, և նրանցից ոչ մեկը ցանկություն չի հայտնել անդրադառնալ հայ-թուրքական հայտնի դեպքերին ու հարաբերություններին: Մինչդեռ մասնակիցներին նախապես ուղղված նամակներում Կազմկոմիտեն հավաստիացրել էր, որ վերոհիշյալ հարցերին որևէ անդրադարձ չի լինելու գիտաժողովի ընթացքում: Սակայն առաջին օրը ևեթ պարզվեց, որ այս խնդիրներին ու արցախյան հարցերին նվիրված մի շարք զեկուցումներ կան և անգամ երկու պանելներ են նվիրված դրանց: Պրոֆ. Լ. Երնջակյանն այդ բոլոր օրերին պայքար էր մղում թուրքական դասական երաժշտության, օպերայի, օպերետի հիմնադիր Տիգրան Չուխաճյանի հայ ժողովրդի զավակ, իսկ նրա ողջ ստեղծագործական ժառանգությունը՝ հայկական երաժշտական մտածողության ավանդույթների ու մշակույթի արգասիք հանդիսանալու համար՝ ի դեմս նրա «միայն թուրք կոմպոզիտոր» հորջորջման: Գալով պրոֆ. Հասմիկ Ստեփանյանին՝ ապա նա հնարավորինս փորձել էր մասնակցել հայերին նվիրված կարևոր զեկուցումներին: Ամենադժվարը եղել էր մասնակցությունը պանելներին, ուր մոտ 400 թուրք նախկին դեսպաններ ու կարևորագույն հաստատությունների տնօրեններ և պաշտոնյաներ, հարյուրից ավելի պատվիրակներ Ադրբեջանից ու տեղի ադրբեջանցիներ չորս ժամ անընդմեջ խոսել են ԱՍԱԼԱ-ի կողմից թուրքական դիվանագետների սպանությունների, հայերի ու նրանց «բարեկամ օտար գիտնականների» կողմից ցեղասպանության խնդրի ուսումնասիրության ու դրա «աղավաղման» շուրջ: Զեկուցումներ են եղել օսմանյան արխիվային նյութերը հրատարակելու պատրաստակամության մասին, որպես «առաջին կարգի անվերապահորեն կարևոր ու ստույգ» աղբյուրների, որոնք վերջ պիտի դնեին թուրքերի նկատմամբ «անհիմն» հալածանքներին: Իհարկե, եղան վաստակավոր դեսպանների 1-2 լուրջ զեկուցումներ, որոնց կարծիքով խնդիրը պետք է լուծվի միջազգային իրավունքի ատյաններում, առանց սուր հակամարտությունների ու երկու ժողովուրդներին գրգռելու մտադրությունների, քանի որ այսօր «հայ և թուրք երիտասարդները սովորում են համալսարաններում կողք կողքի, բարեկամներ են և նույնիսկ սիրահարվում, ամուսնանում են»: Գալով ադրբեջանա-

Անիի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

կան պատվիրակության անդամներին ու պատվիրակության ղեկավարի զեկույցներին՝ ապա դրանք որևէ առնչություն չեն ունեցել գիտության հետ ու բոլորովին չեն տարբերվել փողոցային մակարդակի խոսակցություններից և հնարովի մեղադրանքներից՝ առատորեն համեմված լինելով Հայաստանի ու նրա ղեկավարների մասին վերջին հայհոյանքներով: Մասնավորապես պատվիրակության ղեկավարի զեկույցն աչքի է ընկել իր «պատմական խորը գիտելիքների իմացությամբ», թուրք ավագ եղբայրների հետ վերջապես «Հայաստանը կործանելու» կոչերով: Պանելն անցնում էր միայն թուրքերեն և ադրբեջաներեն լեզուներով առանց անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուների թարգմանության: Ամեն մի հայհոյանք և զրպարտություն ուղեկցվում էր դահլիճի «հելալ» բացականչություններով ու ցափահարություններով, որի ընթացքում այդ 400 մասնակիցները շրջվում էին դեպի Հայաստանի պատվիրակը՝ տեսնելու համար նրա վերաբերմունքը: Ամենաարտառոցն այն էր, որ այդ նիստերը ղեկավարող Թուրք պատմական ընկերության նախագահ պրոֆ. Հալաճօղլուն ոչ միայն կարգի չէր հրավիրում, զսպում կամ դահլիճից հեռացնում ճչացող, հայհոյող ու սպառնացող «գիտնականներին», այլ իր կեցվածքով ու մեջբերումներով յուղ էր լցնում կրակի վրա: Հալաճօղլուի հանճարեղ միջամտություններից մեկն այն էր, որ «… հայերը զարմանալի մարդիկ են: Աղթամարը վերաշինեցինք, ասում են, թե ինչու՞ խաչը չկա: Ի՞նչ է, չգիտեն, որ մի հայ այն գողացել ու կնոջն է նվիրել»:

Հ. Ստեփանյանը, հակագիտական ու անհարիր դեպք նկատելով այս պանելների անցկացումը, իր պարտքն էր համարել բողոքել այս ամենի դեմ: Համաժողովի փակման հանդիսավոր արարողությունը, երբ Աթաթուրքի անվան համալսարանի մեծ դահլիճում Թուրքիայի Ներքին գործերի նախարարի ներկայությամբ լավագույնս գնահատականներ էին տրվում հյուրերի կողմից գիտաժողովի աշխատանքներին, ելույթ ունեցավ «ԻԿԱՆԱՍ» - ի 4 սյուներից մեկը՝ ռուս ակադեմիկոս, Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն պրոֆ. Ռիբակովը: Նա ի լուր բոլորի հայտարարեց, որ չարաշահվել է գիտաժողովի հեղինակությունը, մի քանի պատվիրակությունների կողմից անթույլատրելի կերպով քաղաքականացվել են խնդիրները, և դրա պատասխանատուները պետք է պատժվեն: Այս հանգամանքը չի կարող թույլ տալ, որ գիտաժողովը համարվի հաջողված: Մի որոշ ժամանակ անց պրոֆ. Հալաճօղլուն զբաղեցրած պաշտոնից հեռացվեց:

Բարձր մակարդակով կազմակերպված միջոցառումներն ակամա բարեկամների են վերածում մասնակից երկրների գիտնականների մեծ մասին: Իսկ յուրաքանչյուր զեկուցում և զեկուցող պետք է հիշի, որ ներկայացնում է ոչ միայն իրեն և իր գործը, այլև իր երկիրն ու նրա գիտության առաջընթացը, և պիտի միշտ զգոն լինի (գոնե Թուրքիայում) հնարավոր պրովակացիաների դեպքում: *Ք. Գ.*

Իմ ֆակուլտետը…

Մայր բուհին արժանի ուսանողներ

«Դուք պետք է լինեք Մայր բուհին արժանի ուսանողներ, պիտի տարբերվեք բոլոր նկուղային համալսարանների ուսանողներից»: Այս խոսքերով ռադիոֆիզիկայի ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողներիս ընդունեց մեր ֆակուլտետի դեկան Յուրի Վարդանյանը հինգ տարի առաջ: Ու չնայած տարիների հեռավորությանը՝ դրանք դեռ չեն մարել իմ ականջներում, այլ ժամանակի հետ ավելի են իմաստավորվում և արժեքավորվում: Չեմ ուզում, որ խոսքերս իմ մասին ինքնահավան համալսարանականի տպավորություն ստեղծեն, բայց Մայր բուհն իրոք ունի իր անժխտելի առավելությունները: Անկեղծ լինելու դեպքում պիտի ասեմ, որ ես նաև ուրախ եմ, որ կան տարբեր բուհական հաստատություններ, որտեղ ցանկանում է ընդունվել մեր երիտասարդները: Չէ՞ որ անկախ սովորելու ցանկություն ունենալուց կամ չունենալուց ուսանողական կյանքը մարդուն շատ բան է սովորեցնում: Հավանաբար ԵՊՀ ընդունվում են այն մարդիկ, որոնց գիտելիքները բավարարում են դրա համար: Եթե հարցին մոտենանք ֆինանսական տեսանկյունից, ապա ԵՊՀ-ում ուսման վճարները գրեթե նվազագույնն են ներկայիս կրթական համակարգում և տրամադրվում են ամենաշատ անվճար տեղերը: Իսկ բուհի դասախոսներն էլ, ունենալով բարձր գիտական կոչումներ, շարունակում են հավատարիմ մնալ իրենք իրենց՝ ստանալով ավելի քիչ, քան ոչ պետական բուհերի դասախոսները: Այս ամենը ես տեսել եմ իմ ֆակուլտետում և անչափ շնորհակալ եմ ֆակուլտետի դեկանին, դասախոսական կազմին ու դեկանատի բոլոր աշխատակիցներին: Եվ չեմ կարող չնշել վերջերս ֆակուլտետում բացված նոր համակարգչային սենյակի մասին՝ ապահովված նորագույն տեխնոլոգիաներով, որոնք ուսանողներին հնարավորություն կտան տիրապետել ժամանակակից սարքավորումների օգտագործմանն ու կիրառմանը: Լաբորատորիան ստեղծվել է ԵՊՀ ռեկտորատի ուժերով, և ես ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել ողջ ռեկտորատին և ԵՊՀ ռեկտոր պարոն Ա. Սիմոնյանին ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բոլոր ուսանողների անունից:

Շուշանիկ Ստեփանյան
Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանողուհի

Սիրելի՛ ընթերցող, Քեզ ենք ներկայացնում «Վարդանանք» ակումբի անդամների ստեղծագործությունները, որոնք թեև հեռու են կատարյալ լինելուց, բայց մեր սրտի խոսքն են, մեր զգացմունքների արտահայտությունը, ինչը հետաքրքիր ու սիրելի է դարձնում դրանք:

***

Հոսում է նորից գետակը բախտի.
Լուսնե գնդակն ընկավ ջրի մեջ,
Փշրվեց գետի փրփուր թևերին:
Հայոց աչքի մեջ կաթեց կարոտը,
Ու բիբը դարձավ աղահամ անիվ,
Գլորվեց, գնաց բախտի ճամփեքով…
Հայրենի տունը դարձավ սպասում,
Կտուրը շիկնեց կարմիր աղյուսով:
Ու՞ր ենք հեռանում…
Քարափին նորից մասուր է աճում՝
Դուրսը՝ կարմիր սաթ, ներսը՝ լիքը փուշ:
Մեր կանաչ-կարմիր բախտը փշոտ է,
Դեգերումների ճամփան՝ կորամեջք,
հարցական նշան:
Պապիս արցունքի հետքն է մնացել,
Խորշոմների մեջ՝ մարգարտափոշի՝
աղի ու ցամաք:
Մի բուռ արև է ցորենը ոսկի,
Մի բուռ ժպիտ է հացը մատնաքաշ.
Մորս մատների հետքն է բողբոջել
հացի երեսին:
Կարոտը գունդ է, երկիրը՝ կլոր.
Մեր ոտնահետքն է երիզում շուրջը
Այդ կլոր գնդի:
Թափառաշրջիկ մի կորած քամի
Սուլում է ուրախ – տխուր մեղեդի.
Ու պար է բռնել շուրջը օտար տան.
Մենք քամու նման թափառիկ դարձանք:
Իմ հեռու, իմ մոտ, իմ սուրբ Հայաստան,
Քո երկարափեշ ուռիների տակ
Լացն ու ծիծաղն են խմորվում նորից
Ու տարուբերվում վարսերիդ կանաչ:
Տունը դարձել է հույսը ետդարձի,
Կարոտն է շրջում անմարդաբնակ
չորս պատերի մեջ:
Հեռվից հեռու էլ օջախը տաք է,
Լույսի ամբար է հայրենի տունը:
Բացել ես նորից դռները քո տան,
Իմ հեռու, իմ մոտ, իմ սուրբ Հայաստան:
Եկող-գնացող թաց աչքերով են.
Ախր, ինչու՞ ենք արցունքից կախված:
Գնում ենք՝ լաց է, գալիս ենք՝ արցունք.
Որքա՜ն ժլատ է մեր բախտի խինդը…
Հեռանում ենք, որ լավ կյանքով ապրենք,
Բայց երազում ենք մեր ցամաք հացը:
Դու տարածությամբ որքա՜ն հեռու ես,
Նույնքան մոտիկ ես անուրջների մեջ:
Քորերդ տաք են, բարձունքում՝ արև,
Արևի շողով մագլցում ենք վեր.
Լույսից են ծուլված դռները մեր տան
Իմ հեռու, իմ մոտ, իմ սուրբ Հայաստան:

Արփինե Սարոյան

***

Երբ դու թևածես ժամանակների հայացքների մեջ,
Ինչպես արևը ծովի ջրերում…
Երբ հայտնաբերես խառնաշփոթից մոլորված մի էջ
Երկինքդ շոյող հովի գրերում…
Երբ մոմերի պես փայլեն աչքերդ անշունչ քաոսից,
Ինչպես աստղերը մթության գրկում…
Երբ արևներդ երգելով նետես մտքերիդ փոսից
Դեպի երազներ ու ծովեր անհուն…
Նո՛ր դու կծնվես, նո՛ր կթոթովես, նո՛ր կհասկանաս
Ամեն հնչյունը խոսող վայրկյանի…
Ու դու կպարես ու կծիծաղես ու կմիանաս
Բառերով հյուսած կրակին ձայնի…

Լուսինե Համբարյան

Իմ ազգ

Հայոց վշտերից, դարավոր ցավից, /Տառապանք կրած, դարեր հալածված,
Բարբարոսների աղտոտ ոտքերին / Ու ճիրաններին դաժան զոհ դարձած,
Կանգնած է ահա իմ ազգը թշվառ: / Կանգնած է հպարտ
Իր Մասիս սարի, իր Սիփան սարի նման անսասան,
Որ այսքան տարի եղել են կապված, / Շղթայված, լծված:
Տեսել են դավեր, զրկանքներ, ցավեր:
Կապված է եղել դարերով իր վեր լեզուն մեսրոպյան:
Չեն խոսել լեզվի կապանքի ցավից, / Այրվել են, եթե խոսել են հանկարծ,
Սրի են քաշվել, քառատվել, հատվել…
Բայց ծուխը հայոց չմարեց երբեք, / Այն երկինք ելավ ու կելնի հավերժ
Իր ազնիվ գործով ու փառքով անշեջ: /Հասել է ահա պիղծ շղթաների փշրելու ժամը:
Հայոց շղթայված լեռները զորեղ պիտ շնչեն կրկին,
Ու պիտի լսվի համայն աշխարհում / Սրտի բաբախը հայոց լեռների:
Եվ թող աշխարհը այսօր իմանա, / Որ լեզու ունենք խոսելու համար,
Եվ ճամփա ունենք, ազնիվ ճանապարհ
Մեր իսկ ձեռքերով սեփական դատը լուծելու համար:

Քրիստինե Պապիկյան

Հերոսներին հիշելը նույնպես հերոսություն է

Ամուր և հզոր պետություն ունենալու գրավականներից մեկը հայրենասեր և ազգային արժեքներով դաստիարակված սերունդ ունենալն է: Հայրենասիրությունը բարձրագույն արժեք է: Այն պետք է սերմանել մանուկ հասակից՝ ընտանիքում, այնուհետև ազգային ոգով կրթել ու դաստիարակել մանկապարտեզում, դպրոցում, բուհում:

ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի դուստրը՝ Ասրամ Կրպեյանը

ԵՊՀ «Վարդանանք» ակումբը բազմաթիվ ռազմահայրենասիրական միջոցառումների շարքում հետևողականորեն իրականացնում է «Դասը վարում են համալսարանականները» ծրագիրը, որի շրջանակներում մայրաքաղաքում և մարզերում այցելություններ են կատարվում ԵՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների դպրոցներ: Անշուշտ, խոսքը սովորական դասի մասին չէ: Այդ դասերը, որոնք վարում են ուսանող վարդանանքցիները և զոհված ազատամարտիկների հարազատներն ու ընկերները, ունեն հատուկ նշանակություն և իմաստ:

Վերջերս ակումբը հրավեր ստացավ Խաչիկ Դաշտենցի անվան թիվ 114 դպրոցից: Այս անգամ դասը նվիրված էր ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի հիշատակին: Ես և մայրիկս՝ Իրինա Բարսեղյանը, ակումբի մյուս անդամների հետ փորձեցինք աշակերտներին փոխանցել մեր հայրենասիրական գաղափարներն ու խոհերը: Շատ հետաքրքիր էր զրույցը 11-րդ դասարանցի պատանիների ու պարմանուհիների հետ: Նրանք համակ ուշադրությամբ լսում էին մեզ, իսկ նրանց աչքերից փոխանցվող անկեղծությունն ինձ հույս ներշնչեց, որ անպայման ունենալու ենք ամուր և հզոր հայրենիք:

Համոզված եմ, որ հայրիկիս անձնական օրինակը, որ հայրենասիրության, հայրենիքի հանդեպ անմնացորդ նվիրումի, բացառիկ հերոսականության փայլուն դաս է, կուղեկցի երիտասարդ սերնդին ողջ գիտակցական կյանքում, կիմաստավորի նրանց կյանքը և կմղի նորանոր վերելքների, որովհետև հերոսներ ծնվում են ոչ միայն պատերազմում: Հայրենասիրություն է նաև խաղաղ պայմաններում հերոսներին արժանի կյանքով ապրելը և նրանց հիշատակը մշտապես վառ պահելը… Մենք իրավունք չունենք թերանալու որևիցե մի բնագավառում: Ներկայումս աշխարհը զարգանում է բավականին արագ: Հզոր պետություն և պետականություն ունենալու համար անհրաժեշտություն կա հետևելու միջազգային չափանիշներին և տիրապետելու նորագույն տեխնոլոգիաներին՝ միևնույն ժամանակ չմոռանալով ազգային արժեքները, սեփական ժողովրդի պատմությունը, կրոնը, լեզուն և մշակույթը:

Ասպրամ Կրպեյան

Սիրելի՛ ընթերցող, հայոց բանակի ստեղծման տասնութերորդ տարելիցի կապակցությամբ Ձեզ ենք ներկայացնում ԵՊՀ զոհված ազատամարտիկ Տիգրան Սարգսյանի որդու՝ Արգիշտիի խոհերը արցախյան ազատամարտի շուրջ: Արգիշտին ու մեր բանակը գրեթե նույն տարիքին են և դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու: Ու չնայած իրենց կորուստներին՝ երկուսն էլ լավ են հասկանում հայտնի հռոմեացի գրող Վեգեցիուսի խոսքերը. «Նրանք, ովքեր խաղաղություն են ցանկանում, թող պատրաստվեն պատերազմի»:

XX-րդ դարի մայրամուտին, երբ բազմաթիվ ազգեր ու պետություններ, որոնց թվում նաև փլուզվող Խորհրդային կայսրության ժողովուրդները, պիտի ապացուցեին իրենց գոյության իմաստն ու իրավունքը՝ մուտք գործելու նոր հազարամյակ, հայերը, ինչպես նախկինում, այդ ժամանակ էլ ստիպված եղան իրենց գոյության իրավունքը պաշտպանել զենքով: 1988-ին սկսվեց Արցախյան շարժումը, որը պետք է վերաճեր պատերազմի և ավարտվեր հայերի փառավոր հաղթանակով: Ապավինելով իր քանակական գերակշռությանը՝ թշնամին իրեն բնորոշ վայրագությամբ պատասխանեց Արցախը Մայր հայրենիքին վերադարձնելու մեր ժողովրդի արդար պահանջին: Սակայն ոսոխը չհասավ իր ցանկալի արդյունքին. հայ մարդը ելավ ոտքի ու տվեց արժանի հակահարված՝ հաղթելով պատերազմում և կերտելով անկախ պետականություն: Դրանով հայոց ազգն ապրեց այն բերկրանքը, որը չէր զգացել դարեր շարունակ: Այս ամենը շատ թանկ նստեց հայ ժողովրդի վրա՝ դաժան պատերազմ, բազմաթիվ անմեղ զոհեր, խորը տնտեսական ճգնաժամ, շրջափակում, սով և զանգվածային արտագաղթ: Սակայն նպատակն արդարացնում է միջոցները, առավել ևս երբ գերնպատակ է: Մենք ևս մեկ անգամ ապացուցեցինք մեր գոյության հավերժությունն ու կենսունակությունը ապագայի նորանոր մարտահրավերների առկայության պայմաններում:

ԵՊՀ զոհված ազատամարտիկ Տիգրան Սարգսյանի որդին՝ Արգիշտի Սարգսյանը

Արգիշտի Սարգսյան

Ես պարտավոր եմ շարունակելու Վարդանի գործը

Սիրելի՛ ընթերցող «Կենդանի կամուրջներ» խորագրի շրջանակներում այս անգամ մեր հյուրն է Վարդան Ստեփանյանի (Դուշման) քույրը՝ Արմենուհի Ստեփանյանը, ով 2009-ին ստացավ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ իրականացնելով մոր՝ տ. Զարիկի վաղեմի երազանքը: Սա հանդիպելու և զրուցելու լավ առիթ էր, մանավանդ որ նա ոչ միայն գիտական, այլև մանկավարժական գործունեություն է ծավալում: Աշխատում է Գարեգին Նժդեհի անվան թիվ 161 դպրոցում՝ որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհի, ինչը նրա մանկության երազանքն է եղել:

Հիշողություններ մանկությունից

Ես տուն-տունիկ չեմ խաղացել, միշտ դպրոց-դպրոց եմ խաղացել կամ կռիվ-կռիվ եղբորս՝ Վարդանի հետ: Դրա համար շատ նպաստավոր պայմաններ կային. մենք մեծանում էինք գրադարանում, որը հիմա տուն-թանգարան է: Պարտիզանական գրոհներ էինք կազմակերպում, թաքնվում էինք գրադարակների հետևում, գերեվարում ու ազատագրում գրքերը: Իսկ ամառային արձակուրդներին մայրս մեզ միշտ գյուղ էր ուղարկում, ու դա շատ մեծ նշանակություն ունեցավ մեզ համար. երբ երեխան հողի հետ է շփվում, ճիշտ է զարգանում: Հիմա ես գյուղում ծաղիկներ եմ աճեցնում, որ Եռաբլուր մեր գյուղի ծաղիկներից տանեմ, որովհետև Վարդանը դրանք շատ էր սիրում: Մանկությունը հետագա ճանապարհը կառուցելու ուղենիշ է մարդու համար:

Վարդանը միշտ իմ կողքին է

Մենք երեք երեխա ենք եղել, բայց մայրս մեզ այնպես է մեծացրել, որ եղել ենք մեկ հոգի, երեք մարմին: Վարդանի հետ միասին էինք աշխատում Նուրբ բրդյա գործվածքների կոմբինատում: Ոսկի ձեռքեր ուներ: Դեռ փոքրուց մենք մորիցս աշխատասիրության փայլուն օրինակ էինք վերցրել, գիտեինք նաև, որ խնայել ու սեփական ձեռքերով արարել է պետք: Վարդանը կարող էր փայտից մարդ քանդակել: Երբ ես ընդունվեցի համալսարանի բանասիրական ֆակուլտետ, նա արդեն նույն բուհի իրավաբանական ֆակուտետի ուսանող էր: Երբ տեսավ ազգանունս ընդունվողների ցուցակում, ասաց. «Մանկավարժ ես դառնալու, քո սրբազան պարտքը լինի երբեք չխեղճացնել երեխային»: Հիմա, որ տեսնում եմ՝ մեր երեխաները խեղճ չեն, հպարտանում եմ, բայց երբեմն շատ տխրում եմ, որովհետև դաժանություն էլ կա նրանց մեջ, որ հեռուստատեսությունից ու ժամանակակից կյանքից է գալիս: Իսկ Վարդանն իր կյանքով ապացուցեց, որ սիրել է պետք մարդկանց: Ամեն անգամ, երբ մտնում եմ դասարան, նայում



Վարդանի Մայրը՝տ.Զարիկը, դստեր՝ Արմինեի և որդու՝ Տիգրանի հետ

երեխաների աչքերին, վերանում եմ աշխարհից՝ մոռանալով ամեն հոգս ու տառապանք: Դասարանում Վարդանը միշտ իմ կողքին է, յուրաքանչյուր տղայի մեջ նրան եմ տեսնում, վաղվա զինվորին, յուրաքանչյուր աղջկա մեջ Վարդանի երազած հայուհուն եմ տեսնում, որովհետև Վարդանը շատ խիստ էր աղջիկների նկատմամբ՝ կնամեծար լինելով: Ծնողի օրվա կարևոր խնդիրը երեխային կերակրելն ու հագցնելն է դարձել: Սոցիալական պայմանները մարդկանց ստիպեցին, որ շատ կարևոր բաներ կողքի դրվեն: Արդյունքում տանուլ ենք տալիս այն, ինչը հետո չենք կարող վերադարձնել: Ու ես իմ պարտքն եմ համարում իրագործել Վարդանի՝ ուժեղ, գրագետ ու հայրենասեր սերունդ ունենալու երազանքը՝ անելով դա մեծ նվիրումով ու անմնացորդ, ինչը եղբորս տված ամենամեծ դասն է:

Մեր կյանքի ուղենիշը մայրս է

Դաստիարակությունն այն չէ, որ ասես՝ այսպես արա, այլ այն է, ինչ որ տեսնում ենք: Մեր կյանքի ուղենիշը մայրս է եղել. հայրենասիրությունը, աշխատասիրությունը և նվիրումը նա է փոխանցել: Նժդեհը պատահական չի ասում՝ ազգերի ճակատագրերը մայրերի ափերի մեջ փնտրեք, որովհետև կինն է, որ իր ամբողջ նվիրումը, սերը, հոգին փոխանցում է երեխային: Մայրս իմ տեսած ամենանվիրված էակն է, նա իր կանացի երջանկությունը դրել է մի կողմ և զբաղվել երեխաներով: Աշխատել է գիշեր-ցերեկ, միայն թե մենք չընկճվենք և կյանքում գտնենք մեր հաստատուն տեղը: Սա հայրենասիրության վառ օրինակ է: Ես միշտ ցավ եմ ապրում, երբ մայրս կշտամբում է ինձ: Ես ոչ թե վախենում եմ, որ նա ինձ կվիրավորի, այլ վախենում եմ, որ ցավ կպատճառեմ մորս, ով ապրում է իր արածների արդյունքը մեր մեջ տեսնելով: Մայրս ուժեղ կին է, չի արտասվում, բայց ես գիտեմ, որ ներսում ամբողջը վիշտ է ու տառապանք է: Երբ ես կյանքում ինչ-որ բանում դժվարանում եմ, զանգում կամ հանդիպում եմ մորս, ոչինչ չեմ ասում, պարզապես զրուցում եմ և նոր լիցքեր ստացած՝ շարունակում եմ ապրել: Վարդանն իր չապրած կյանքով ստիպեց, որ մենք կրկնակի ապրենք: Մենք պարտավոր ենք հասցնելու նրա չհասցրածը:

Ցանկացած դաս՝ սիրո խոստովանություն

Ես դպրոցում ցանկացած դաս սիրո խոստովանությունից եմ սկսում, աշակերտներիս շատ անգամներ եմ ասել, որ սիրում եմ իրենց: Անգամ, երբ պիտի զայրանամ երեխայի վրա, անմիջապես ժպիտ է գալիս դեմքիս, ու հիշում եմ

Վարդանին. ի՞նչ իմանաս՝ այդ երեխան ի՞նչ ճակատագիր է ունենալու հետագայում: Դպրոցն ամենից առաջ սեր պիտի տա երեխային և հոգատարություն, այն, ինչը որ բացակայում է դրսում: Եվ ես ուրախանում եմ ամեն անգամ, երբ որևէ երեխայի կյանքում կարողանում եմ կարևոր ներդրում ունենալ:

Վարդանի անվան տուն-թանգարանը Վարդանի տունն է

Փառք Աստծո, ես երկու եղբայր ունեմ: Տիգրանը մի ուրիշ երևույթ է իմ կյանքում. նրա մեջ Վարդանի սերն էլ է խտացել, չնայած ես Վարդանին հիմա էլ եմ զգում, հիմա էլ եմ տեսնում: Նա այսօր էլ շարունակում է ապրել իր անվան տուն-թանգարանում և այն երեխաների մեջ, ովքեր իր անունն են կրում: Ես և Տիգրանը ամեն մեկս մեր տղան ունենք Վարդան անունով: Թանգարանը դարձավ այն հավաքատեղին, որտեղ հավաքվում ենք ոչ միայն ես ու Տիգրանը մեր ընտանիքներով, այլև բոլոր նրանք, ովքեր ինչ-որ մի պահ դառնանում են այս աշխարհից: Հավաքվում են Վարդանի բոլոր ընկերներն ու մտերիմները, Վարդանին տեսած ու չտեսած բոլոր Վարդան սիրողները, որովհետև նրա կերպարը շատ հետաքրքիր է, նա հիմա ավելի շատ է ապրում ու արարում, քան ոմանք: Բանակ գնալուց առաջ շատ երիտասարդներ են գալիս թանգարան և Վարդանի նկարի առջև երդվում են արժանապատիվ կերպով ծառայել: Թանգարանի ամեն մի անկյունում Վարդանի շունչն է, և դա այն գրադարանն է, որտեղ ես ու Վարդանը մանկության տարիներին շատ ենք խաղացել, միաժամանակ սպասարկել ենք ընթերցողներին, երբ մայրս գործով կոմբինատ է գնացել: Այսօր թանգարան այցելած յուրաքանչյուր մարդու Վարդանն է հյուրասիրում, իսկ նա շատ հյուրասեր էր: Վարդանը մարդուն էր սիրում՝ անկախ տարիքից:

Նա ծնվել էր պայքարելու համար

Վարդանը շատ էր դեմ անարդարություններին, նա ծնվել էր պայքարելու համար: Եթե չլիներ արցախյան պատերազմը, Վարդանը կպայքարեր մեկ այլ բնագավառում: Ամենուր արդարություն էր փնտրելու: Այսօր ես և Տիգրանն ինչ-որ մի բան անելուց առաջ մտածում ենք, թե Վարդանն ինչպես կվարվեր ու առաջնորդվում ենք դրանով: Մենք պարտավոր ենք Վարդանի հեղինակությունը պահել, որովհետև այսօր նա ապրում է մեզնով: Վարդանն այնքան է ապրելու, որքան մենք ենք ապրում, որքան իմ երեխան է ապրելու: Ես շատ կուզեի, որ Վարդանը մի երեխա ունենար, բայց չհասցրեց, որովհետև միշտ մտածում էր, որ երեխան պետք է անպայման հայր ունենա, իսկ ինքը գիտեր՝ իր կյանքը կարճ է լինելու:

Արցախյան ազատամարտը չի արժևորվում

Հուշաքար՝ կանգնեցված Վարդանի և իր ընկերների զոհվելու վայրում

Ես ցավով եմ ասում՝ մեզանից անընդհատ խլել են, դարեր հետո մենք կարողացանք հաղթանակ արձանագրել ու … Ժողովրդի սոցիալական ծայրահեղ պայմանները ստիպեցին, որ ինքը չսիրի իր հաղթանակը, երևի տարիներ պիտի անցնեն, որ արժևորվի արցախյան ազատամարտը: Շատ հակասական երևույթներ տեղի ունեցան: Այսինքն՝ նա, ով արժանի է, չի ապրում այնպես, ինչպես հարկն է. պատերազմի դաշտում զոհված նվիրյալի կինն ու երեխաները չեն ապրում լավ պայմաններում: Ի վերջո, ամենաթանկ բանը կյանքն է, և տարիներ առաջ մարդիկ զոհաբերեցին այն, ուստի գոնե նրանց հարազատների նկատմամբ պետք է յուրահատուկ վերաբերմունք ունենալ. դրանով հաջորդ սերունդներն են դաստիարակվում: Նյութականը չէ, որ այդքան կարևոր է, ուշադրության ու հոգատարության պակաս ունեն մարդիկ: Զոհվածների մայրերի հետ շատ եմ հանդիպել, երբ նրանց հետ խոսում ես իրենց որդիների մասին, անմիջապես աչքերը փայլում են, չէ՞ որ կա մեկը, որ գնահատում է իր որդու արածը: Բնության մեջ ամենամեծ խախտումն այն է, երբ մայրը որդի է կորցնում, դրանից մեծ վիշտ ես չեմ պատկերացնում: Բազմիցս նման խոսակցություններ են եղել, թե այդ տղաները իզուր զոհեցին իրենց կյանքը: Վարդանի մահով կարծես հոգիս բաժանեցին մարմնիցս, բայց անգամ այդ մեծ վշտի դեպքում ես իրավունք չունեմ Վարդանի փոխարեն որոշելու՝ ինչու՞ ինքն իր կյանքը զոհաբերեց, ես պարտավոր եմ նրա արած գործը շարունակելու: Այսօր մենք խնդիր ունենք սովորեցնել հայ մարդուն սիրել իր տեսակը: Մենք սկսել ենք չսիրել մեզ ու մեր հաղթանակը, այն հաղթանակը, որն այդքան հրաշալի երիտասարդների արյան գնով ձեռք բերվեց: Բայց մենք այսօր էլ շատ լավ երիտասարդներ ունենք, հրաշալի երեխաներ են մեծանում, ուստի պետք է սկսենք սիրել, հարգել ու գնահատել ինքներս մեզ:

Անհրաժեշտ է օգնել ժամանակակից երիտասարդին

Շատ հոգսաշատ է ժամանակակից երիտասարդը, տեղեկատվական այս մեծ հոսքի մեջ կողմնորոշվելու խնդիր կա, վիճակը քաոսային է, խաթարված են բարոյական արժեքները, ապագան անորոշ է, հնարավորությունները՝ քիչ, աշխատաշուկա չկա: Բայց դարաշրջանը հեղհեղուկ է հենց աշխարհի մասշտաբով, ուստի պետք է օգնել այսօրվա երիտասարդին: Մեծերն իրավունք չունեն իրենց հոռետեսական տրամադրությունները փոխանցել նրանց: Ա՛յ, ինչու՞ են երիտասարդները թանգարան հաճախ այցելում, որովհետև գալիս և տեսնում են, որ որդի կորցրած մայրը չի հուսահատվում, ինքն իր հերթին սրտապնդում է երիտասարդին կառուցել վաղվա օրը: Այս հարցում նրան օգնում է նաև «Վարդանանք» ակումբը, որն այս տարիներին միշտ մեզ հետ է եղել: Հաղթելու միակ գրավա-

կանն այս վայրիվերումների մեջ օտարամուտ արժեքներին դեմ կանգնելն է ու երիտասարդին օգնելը:

Մորս մասին գիրքը իմ հոգու պարտքն է լինելու

Ես մի նպատակ ունեմ, պիտի անպայման գիրք գրեմ մորս մասին, որովհետև պարզել եմ, որ այսօրվա երիտասարդին պետք է մի այնպիսի իրական կերպար, որը կուղղորդի իրեն, իսկ մորս կյանքը ամբողջությամբ նվիրում է և դաստիարակություն: «Զրույց որդուս հետ» գրքի շարունակությունը պետք է լինի «Զրույց մորս հետ» գիրքը, որն իմ հոգու պարտքն եմ համարում: Վերջին ժամանակներս ես նկատեցի, որ մեր ծնողներին մենք չենք ասում՝ ինչքան ենք սիրում իրենց: Իհարկե, անում ենք ամեն ինչ, որ չդժվարացնենք իրենց կյանքը, ինչ-որ բանով օգտակար լինենք, բայց մեր սիրո մասին չենք խոսում, իսկ մարդը կարիք ունի լսելու: Եվ ես սկսեցի բարձրաձայն մորս խոստովանել իմ սերը: Այսօր ես վախենում եմ ուշանալուց: Երբեմն ինձ թվում է՝ ես չհասցրեցի Վարդանին ասել, որ իրեն շատ եմ սիրում: Դրա համար էլ ես դպրոցում անվերջ սիրո մասին եմ խոսում, ճշմարիտ սիրո, որ կարող է ծնվել ու զարգանալ ավանդական հայկական ընտանիքում միայն: Իսկ իմ մոր մասին գիրքը շատ մեծ նշանակություն կունենա այդ հարցում: Արդեն սկսել եմ…

Ամանորյա մաղթանքներ

-Ուզում եմ, որ բոլոր Նոր տարիները երջանկություն, խաղաղություն, հույս ու հավատ բերեն հայ ժողովրդին: Ուզում եմ, որ մեր երիտասարդները աշխարհի ամենաերջանիկ մարդիկ լինեն, և հասկանան՝ որն է իրական երջանկությունը…

Նյութը պատրաստեց Արփի Խաչատրյանը

Մենք չենք ժառանգել երկիր մեր հայրերից, Այլ պարտք ենք վերցրել այն ապագա սերունդներից:

ՄԱԿ-ի հրապարակած զեկույցից

Օզոնային շերտի քայքայման խնդիրն առավել քան 30 տարի հանդիսանում է մարդու գործունեության հետևանքով ծագած էկոլոգիական գերխնդիրներից մեկը: Նախորդ դարի 70-ականների վերջերին պարզ դարձավ, որ արդյունաբերական թափոն հանդիսացող մի շարք նյութեր, ինչպես նաև դեպի տիեզերք ուղարկվող հրթիռների, ինքնաթիռների վառելիքի արգասիքները քայքայում են օզոնային շերտը: Դրանք հիմնականում քլոր պարունակող նյութերն են, որոնք, ստրատոսֆերայում ենթարկվելով արևի ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությանը, կորցնում են քլորի ատոմը, որն էլ ազատվելով սկսում է քայքայել օզոնի մոլեկուլները: Հասկանալու համար իրավիճակի կարևորությունը պետք է գիտակցել, որ օզոնային շերտը այն բնական վահանն է, որը երկրագունդը պաշտպանում է կարճալիք ուլտրամանուշակագույն ճառագայթներից, որոնք եթե թափանցեն կենսոլորտ, կործանարար ազդեցություն կունենան կենդանի օրգանիզմների վրա: Հարցի շուրջ ուշադրությունը մեծացավ, երբ բրիտանացի գիտնականները պարզեցին, որ 1977-1984 թթ. ընթացքում Անտարկտիդայում գտնվող Հալլի-Բեյ կայանի շրջակայքում օզոնի շերտը կրճատվել է առավել քան 40 տոկոսով:



Հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ամբողջ Անտարկտիդայի, ինչպես նաև Արկտիկայի, Ավստրալիայի շրջանի օզոնային շերտը մեծապես կրճատված է: Սա հիմք հանդիսացավ, որպեսզի 1987թ. սեպտեմբերի 16-ին Մոնրեալում շուրջ 23 պետություններ ստորագրեն պայմանագիր, ըստ որի՝ պետք է կրճատվի օզոնային շերտը քայքայող նյութերի օգտագործումն արդյունաբերության մեջ: Հետագա տարիներին առավել քան հարյուր պետություններ միացան պայմանագրին, որն էլ թույլ տվեց մասամբ կասեցնել օզոնային շերտի քայքայումը:

1994թ. ՄԱԿ-ը որոշում կայացրեց յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 16-ը նշել որպես Օզոնային շերտի պաշտպանության օր, որի շրջանակներում կազմակերպվում են գիտաժողովներ, միջոցառումներ՝ նվիրված խնդրի լուծման նոր ուղիների մշակմանը, եղած արդյունքների քննարկմանը:

«Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» Հ/Կ

Զոն Մկրտչյան

Սիրելի՛ ընթերցող շարունակում ենք տպագրել արցախցի մեր հայրենակիցների ստեղծագործությունները՝ որպես ամանորյա նվեր այն մարդկանց, ովքեր սիրում և հետաքրքրվում են արդի հայ քնարերգությամբ:

ԱՐՑԱԽ

Դու հունդ ես, հող ես, / Հաց ես սեղանի,
Կյանք ես, արև ես, / Շունչ, սպեղանի:
Դու խենթ Թարթառ ես, / Բամբիռ ես, թառ ես,
Երգ ես, բարբառ ես, / Մաշտոցյան տառ ես:
Դու Գանձասար ես, / Քիրս, Մռավ սար ես,
Այս մեծ աշխարհում / Իմ նախշն ու զառն ես:
Իմ Խորաձորն ես, / Իմ Տումին, Ցորն ես,
Իմ Ամարասի / Սրբազան ձորն ես:
Իմ Զրաբերդն ես, / Իմ Հնաբերդն ես,
Դու իմ Գտիչը, / Խոխանաբերդն ես:
Դու իմ դարավոր / Տիգրանակերտն ես,
Մեր հին Խաչենը, / Մեր Կարկառ գետն ես,
Արայի անտառ, / Արայի տունն ես,
Որտեղ Ավարայր՝ / Դու այնտեղ թուր ես:
Թեկուզ Ղարաբաղ՝ / Իմ այգեստանն ես,
Իմ տունը, տեղը, / Իմ շեն ոստանն ես,
Դասեր ես տալիս / Արար աշխարհին,
Քո կյանքի դժվար / Այդ ճանապարհին:
Դու միշտ հայի տուն, / Հայի օջախ ես,
Ինչ էլ որ լինի / Դու միշտ Արցախ ես:

ՀՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

***

Բառի ստրուկ, բառի քուրմ, / բառի տիրակալ,
երկնքի մեջ մխրճված մի ձայնով / հանիր ինձ օրվա ծերացած
ասեկոսություններից, / առևանգիր ու տար
ամպի քուլաներից բարձր մի կացարան, / մի ծով, չհայտնաբերված,
անմարդաբնակ մի կղզի, / մի ծովահատակ: …

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ

Ինձ առաջ է տանում հավատը:
Իմ երազների կեղևից կաթում է արցունքը / աստղի:
Խղճի անապատներում փոթորկվում են / հավատի հորիզոնները:
Երկինքները փետրավորվում են սյուներին / հույսի:
Ես համբուրում եմ երակը հիշողության:
Եղեռնի ճիչերով նժարում եմ վայրկյանները:
Իմ ժամանակը կայծակի շեղբ է,
որ հողից հանում է կանչե՛ր երազի
և ճյուղավորում թևերում Անհունի:
Ինձ առաջ է տանում հավատը: Ձայնս / միավորում է բևեռները:
Ճանապարհից բխում է հայացքը պատմության,
ինչպես աղբյուր, որից ծարավի՞ շիթեր է
պոկում հասարակությունը: Ոտքերս ճեղքում են
ժայռերը անորոշության: / Մասիսի ձյուներում փայլփլող / աչքերս
հավատի խորաննե՞ր են… / Ինձ առաջ է տանում հավատը:

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ես նորից հիշում եմ քեզ, / և պահը ունենում է խորհուրդ,
և օրը ունենում է արև, / և սիրտը ունենում է կարոտ,
և դու իմն ես դառնում ավելի:
Ես նորից ներում եմ քեզ, / և լույսը ունենում է աղջիկ,
և հույսը ունենում է ճամփա, / և միտքը մոտենում է ափին,
և դու իմն ես դառնում ավելի:
Ես նորից կանչում եմ քեզ, / և ճամփան ունենում է ետդարձ,
և խոտն ունենում է ծաղիկ, / և հավքն ունենում է երգեր,
և դու իմն ես դառնում ավելի:
Դու հավերժ տանջում ես ինձ, / և ցավը ունենում է պսակ,
և հոգին ունենում է երազ, / և չի ունենում սերը սահմաններ,
և դու իմն ես դառնում ավելի:

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՂԱՐԿԻՐ

Դիր ծրարի մեջ թախիծն ու ժպիտը քո / Եվ ուղարկիր ինձ,
Ծրարիր քո պատուհանը, տունը, հասցեն, / Օրերդ՝ տխուր թե ուրախ, / Ուղարկիր ինձ,
Փոստատուն տար արցունքներդ, / Սերդ, հոգդ, ուղարկիր ինձ,
Որոնք այնպե՞ս տրտում դարձան / Ապերջանիկ այս խակ սիրուց:
Անձրև է գալիս, / Շտապում եմ… / Դու հույսերիս պատասխաններն / Ուղարկիր ինձ:

ԱՆԱՀԻՏ ՔՈՉԱՐՅԱՆ

***

Երբ կարոտում ես՝ աչքերդ փակիր, / լսիր անձրևի սեթևեթանքը,
աղմուկների մեջ լռություն փնտրիր / և լռությունը լցրու բառերով:
Իսկ երբ կարոտից հանկարծ խենթանաս, / փորձիր անձրևը լցնել աղմուկով
և քայլիր / մինչև արևը փայլի:

ՏԱԹԵՎԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հիշե՛նք այս խոսքերը, դարձնե՛նք մեր սեփականությունը...

Այս շիրիմները վկա են երիտասարդ շատ ու շատ կյանքերի ժամանակից շուտ ընդհատվելուն, բայց մեր ժողովուրդը անհրաժեշտության դեպքում կրկին կունենա բազմաթիվ հերոսներ, որոնք հայրենիքի ազատության և սեփական ժողովրդի անկախ ապրելու ձգտման համար չեն խնայի ոչինչ: ԵՊՀ ուսանողներից շատերը արցախյան շարժման հենց սկզբից մեկնեցին ռազմաճակատ: Ավա՜ղ, նրանցից շատերը չվերադարձան: Գերբնական մարդիկ չէին նրանք, բայց հերոսացան, որովհետև որոշում ընդունելու մեծագույն կարողություն ունեին և այդ որոշումը ընդունում էին սովորական մարդուց մի քանի ակնթարթ առաջ և այդ կարողությունն է, որ նրանց դարձրեց հերոսներ, հայրենիքի համար մարտնչող մահապարտ մարտիկներ: Մենք գլուխ ենք խոնարհում նրանց հիշատակի առաջ և միևնույն ժամանակ վստահորեն արտահայտում մեր կամքը՝ շարունակելու մեր հայրենիքի անկախության ամրապնդման համար մղվող պայքարը: Վստահ եմ, որ այսօր շատ երիտասարդներ պատրաստ են ամենավճռական պահին զենքը ձեռքին կանգնելու այն մարդկանց կողքին, ովքեր կռվելու են մեր հայրենիքի ազատության և մեր ժողովրդի պայծառ ապագայի համար: Սիրե՛նք մեր բանակը, աջակից լինե՛նք նրան, որովհետև ուժեղ բանակն է, որ ժողովուրդներին և պետություններին իրավունք է տալիս գրավել իրենց արժանի տեղը:

Արամ Սիմոնյան
ԵՊՀ ռեկտոր

Եռաբլուրը այսօր դարձել է մեր ժողովրդի գերագույն սրբություններից մեկը: Թանկացել է այդ հողը, թանկացել է կյանքի չափ, որովհետև այստեղ են հանգչում մեր զոհված ազատամարտիկների աճյունները, այստեղ են կենտրոնացած նրանց ոգիները: Եթե մենք չկռվեինք, այսօր ոչինչ չէինք ունենա. կամ կլինեինք կամ չէինք լինի: Բայց մեր ժողովրդի ճակատին անմահություն է գրված: Սա է մեր ճանապարհը, որովհետև հայ ժողովուրդը, ինչպես ծովը ափերի հետ, հավիտենական կռվի մեջ է, և մենք այդ կռվով է, որ կարողանում ենք հարթել մեր հարատևության ուղին, ուրեմն պետք է խելամիտ լինենք, պետք է համախմբվենք հայոց պետականության շուրջը, պետք է զորավիգ լինենք հայոց բանակին, որովհետև առանց պետականության ու բանակի չենք կարողանա իրականացնել մեր դարավոր երազանքները:

Սամվել Մուրադյան
ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետի դասախոս

Գիտելիքի օրը վարդանանքցիները իրենց համախոհների հետ նշում են Եռաբլուրում

«Վարդանանք» երկամսաթերթ
Հիմնադիր հրատարակիչ ԵՊՀ
«Վարդանանք» ՌՀԴԱ

Գլխավոր խմբագիր՝
Արփի Խաչատրյան
Դիզայնը և համ. ձևավորումը՝
Արշակ Ծառուկյանի
Սրբագրիչ՝ Նար Վարդանյան
http://vardananq.do.am
էլ.փոստ՝ vardananq@gmail.com
Տպաքանակը՝ 99
Ծավալը 1.5 տպ.մամուլ:
Տպագրության եղանակը օֆսեթ:
ԵՊՀ տպագրատուն, Աբովյան
փող. 52: